Funded by the European Union
Ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

ՇՐՋԱՆԱՁԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ. ԻՆՉՊԵ՞Ս ԵՎ ԻՆՉՈ՞Ւ ԼՈՒՍԱԲԱՆԵԼ

Ուղեցույց լրագրողների համար

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
ԵՐԵՎԱՆ, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ..... 2

ՇՐՋԱՆԱՁԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ. ՆՈՐ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ ԳԾԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ..... 4

ԿԱՆԱՉ, ԿԱՅՈՒՆ, ՇՐՋԱՆԱՁԵՎ. Ո՞ՐՆ Է ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ 9

ՇՐՋԱՆԱՁԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ («R-սանդուղք»).....11

ՇՐՋԱՆԱՁԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ. ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 13

ՇՐՋԱՆԱՁԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ՝ ԱՂՔԱՏՈՒԹՅՈ՞ՒՆ, ԹԵ՞ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԻ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 19

ՇՏ ԹԵՄԱՅՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ..20

ՄԵԴԻԱՅԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՇՐՋԱՆԱՁԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 25

ՇՐՋԱՆԱՁԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ. ՈՉ ՄԻԱՅՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 31

ՇՐՋԱՆԱՁԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ.....32

ՇՐՋԱՆԱՁԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԹԵՄԱՆ ՈՉ ՏՆԵՍԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ.....36

ՕԳՏԱԿԱՐ ԱՌՅԱՆՑ ՀԱՐԹԱԿՆԵՐ 48

Այս ուղեցույցը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ CirculUP! Ծրագրի շրջանակում, որն իրականացվում է Իմփաքթ Հաբ Յանցի կողմից՝ Իմփաքթ Հաբ Երևանի և Շրջակա Միջավայր և Առողջություն ՀԿ-ի հետ համատեղ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Ինֆորմացիայի ազատության կենտրոնը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Այս ձեռնարկը նախատեսված է այն լրագրողների և մեդիա-բովանդակություն ստեղծողների համար, ովքեր ցանկանում են ավելի լավ հասկանալ շրջանաձև տնտեսության (ՇՏ) թեման: ՇՏ-ն Հայաստանում համեմատաբար նոր ոլորտ է, որը հաճախ դիտարկվում է միայն տնտեսական հարցերի կամ «կանաչ քաղաքականության» և բնապահպանական ազդեցությունների համատեքստում: Իրականում այն բազմաշերտ է և աստիճանաբար տեսական քննարկումներից անցնում է գործնական փուլ՝ ազդելով թե՛ բիզնես մոդելների, թե՛ քաղաքացիների ամենօրյա վարքագծի վրա:

Ներկայում տարբեր դերակատարների կողմից մշակվում են փաստաթղթեր և կարգավորումներ, իրականացվում ծրագրեր, որոնք ուղղակի կամ անուղղակի ազդեցություն են ունենալու ինչպես բիզնես համայնքի, այնպես էլ շարքային քաղաքացիների որոշումների ու վարքագծի վրա: Սակայն հայեցակարգերի և շահառուների միջև կապը դեռևս զգալի չէ: Բիզնես համայնքը, ստանալով նոր հնարավորությունների և ռազմավարությունների շրջանակ, միաժամանակ բախվում է նոր պարտավորությունների և ներդրումների պահանջի: Տեղեկատվության պակասի պայմաններում շատ գործարարներ հայեցակարգը ընկալում են որպես «կանաչ» և «ֆորմալ» նախաձեռնություն, իսկ առաջարկվող գործիքակազմը՝ որպես հավելյալ բեռ:

Միաժամանակ Եվրոպական փորձը ցույց է տալիս, որ նման քաղաքականությունների հաջող ներդրման համար անհրաժեշտ են լայնածավալ իրազեկում և հանրային քննարկում: Ավելին, ՇՏ ոլորտը սերտորեն փոխկապակցված է նաև այլ ոլորտների հետ, որոնք իրենց հերթին մեծապես կախված է հանրային վերաբերմունքից, արժեքային համակարգից և ավանդական ընկալումներից: Սա ենթադրում է, որ մեդիայի դերը կարևոր է ոչ միայն իրազեկման և հանրայնացման, այլև նոր նարատիվներ ձևավորելու, կարծրացած ընկալումները փոխելու և մշակութային փոփոխություններ նախաձեռնելու համար:

Շրջանաձև տնտեսության հայեցակարգի ներդրումը պահանջում է նաև բիզնես համայնքի ակտիվ ներգրավվածություն: Հատկապես կարևոր են իրական բիզնես փորձի օրինակները, որոնք ցույց կտան, թե ինչպես է ՇՏ-ն նպաստում շահութաբերությանը, մրցունակությանը և երկարաժամկետ կայունությանը: Բայցի այդ, ՀՀ կառավարությունը շրջանաձև տնտեսությունը դիտարկում է որպես առաջնահերթություն. «ՀՀ տնտեսական քաղաքականության 2023-2030 թվականների հայեցակարգի» հստակորեն ամրագրում է կանաչ անցումը՝ որպես ազգային ռազմավարական ուղղություն և որպես առաջնահերթություն դիտարկում «շրջանաձև

տնտեսության խթանումը»: Ուստի առաջիկայում լրագրողները կունենան և՛ հնարավորություն, և՛ առաքելություն հետևելու այս գործընթացներին, վերլուծելու պետական հանձնառությունների իրականացումը և գնահատելու դրանց արդյունավետությունը:

Այս ձեռնարկը տրամադրում է ՇՏ-ի ընդհանուր պատկերավոր քարտեզ՝ ներկայացնելով հիմնական նյութերը, դերակատարներին և թեմաները, որոնք կարելի է ինտեգրել լրագրողական աշխատանքում: Այն նախատեսված է թե՛ ՇՏ-ի մասին առաջին նյութերը պատրաստող, թե՛ փորձառու լրագրողների համար: Բացի այդ, այն կարող է օգտակար լինել լրագրողների ուսուցում իրականացնողներին՝ թեման իրենց կրթական մոդուլներում ներառելու տեսանկյունից համար:

ՇՐՋԱՆԱՁԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ. ՆՈՐ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ ԳԾԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ

Գծային տնտեսություն. «վերցնել – ստեղծել - թափել» մոդելը

Այսօր աշխարհի մեծ մասը դեռ գործում է գծային տնտեսության տրամաբանությամբ: Դա այն մոդելն է, որտեղ հումքը պարզապես վերցվում է բնությունից, վերածվում արտադրանքի, օգտագործվում կարճ ժամանակով, ապա դեն նետվում: Այսպես կոչված «վերցնել–ստեղծել–թափել» համակարգում արժեքը ստեղծվում է հնարավորինս շատ ապրանք արտադրելով և վաճառելով: Այս համատեքստում տնտեսության կայունությունն ու զարգացումը հնարավոր է կլինի միայն այն դեպքում, եթե հումքի, էներգիայի և աշխատուժի պաշարները անսահման լինեն: Իրականում, սակայն, պատկերը բոլորովին այլ է. ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ռեսուրսների կառավարման առկա մոդելները ոչ միայն անդառնալի վնասներ են թողնում շրջակա միջավայրի վրա, այլև անարդյունավետ են տնտեսվարության տեսանկյունից:

Ինչո՞ւ է գծային տնտեսությունը անկայուն



Գծային տնտեսության ամենամեծ թերությունը թերևս այն է, որ թափոնները համարվում են վերջնակետ: Արդյունքում այս մոդելը ոչ միայն սպառում է բնական ռեսուրսները, այլև հսկայական ճնշում է գործադրում էկոհամակարգերի վրա: Թափոնների կուտակումը սպառնում է հողի, ջրի ու օդի որակին, իսկ բնությունից վերցված հումքի անսահման օգտագործումը հանգեցնում է ռեսուրսների սպառմանը: Արդյունքում տնտեսական աճը կարճաժամկետ շահույթ է ապահովում, բայց երկարաժամկետում ստեղծում է կլիմայական, բնապահպանական և սոցիալական ճգնաժամեր:

ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի տվյալներով՝ ամեն տարի արտադրության արդյունքում մոլորակի վրա ավելանում է **300 մլն տոննա պլաստիկ**, որոնցից մինչ օրս միայն շատ փոքր տոկոսն է վերամշակվում: Գիտնականների գնահատմամբ տարկան **19–23 մլն տոննա պլաստիկ հատնվում է ջրային համակարգերում**, այդ թվում՝ գետեր, լճեր, ծովեր և օվկիանոսներ:

Գիտնականների գնահատմամբ՝ տարեկան արտադրված պլաստիկի երկու երրորդը մեկ անգամ օգտագործվելուց հետո դառնում է թափոն: Եթե այս միտումները շարունակվեն՝ պլաստիկ թափոնների քանակը մինչև 2060 թ.-ը կավելանա երեք անգամ:

ՄԱԿ Շրջակա միջավայրի ծրագրի Սննդի թափոնների ինդեքսի 2024 թ.-ի զեկույցի համաձայն՝ աշխարհում ամեն օր թափվում է 1.05 միլիարդ տոննա սնունդ, որը կազմում է ընդհանուր առմամբ սպառմանը հասանելի սննդի **19 %-ը**՝ մանրածախ, սննդի ծառայություններ և տնային սպառումներ ներառյալ: Այս թվի **60 %**–ը գալիս է տնային տնտեսություններից (631 միլիոն տոննա), 28 %-ը՝ սննդի ծառայությունների ոլորտից և 12 %-ը՝ մանրածախից:

Միաժամանակ այսօր մի շարք մետաղներ, որոնք անհրաժեշտ են նորարարական տեխնոլոգիաների և մաքուր էներգետիկ շուկաների համար (օրինակ՝ լիթիում, կոբալտ, նիկել, ռետիկ ձևավորող մետաղներ) համարվում են կրիտիկական, քանի որ հետագա տարիներին դրանք սպառման ռիսկի տակ են դնում ողջ արտադրական շղթան: **«Կրիտիկական հանքային հումքի գլոբալ կանխատեսում»** զեկույցը պարբերաբար ներկայացնում է արտադրության համար կարևոր հումքերի ցանկը, որոնց պահանջարկը մոտ ապագայում կգերազանցեն դրանց պաշարները:

> Այսպիսի տվյալները ուրվագծում են այն ռիսկերը, որին կարող է ենթարկվել գծային մոդելը, եթե չինտեգրվեն փոխարինող կամ վերամշակման մեխանիզմներ: Շրջանաձև մոտեցումները ոչ միայն կբարձրացնեն սարքավորումների պաշարների կայունությունը, այլև կծառայեն արտադրական անվտանգության և ինքնաբավության առումով: Իսկ ռեսուրսների անսահման օգտագործման և արտադրանքի կարճաժամկետ սպառման սկզբունքների վրա աշխատող մոդելները խոցելի են թե՛ բնապահպանական, թե՛ տնտեսական առումով:

Ի՞ՆՉ Է ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ՇՐՋԱՆԱՁԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Շրջանաձև տնտեսությունը առաջարկում է այլ լուծում: Սա մեր մոլորակի սահմանափակ ռեսուրսների արդյունավետ օգտագործման համար ապրանքների և ծառայությունների նախագծման, արտադրության և սպառման նորարարական մոտեցում է: Շրջանաձև տնտեսությունը առաջնորդվում է երեք հիմնական սկզբունքով.

- Կանխել թափոնների առաջացումն ու շրջակա միջավայրի աղտոտումը,
- ապրանքներն ու նյութերը որքան հնարավոր է երկար պահել շրջանառության մեջ,
- նպաստել բնության վերականգնմանը:

Այս մոդելը ենթադրում է արտադրանքները նախագծել այնպես, որ հնարավոր լինի դրանք վերանորոգել, վերօգտագործել կամ վերամշակել: Եթե գծային տնտեսությունում արժեքը ստեղծվում է նորից ու նորից արտադրելով, ապա շրջանաձև տնտեսությունում արժեքը ստեղծվում է նույն ռեսուրսները առավել երկար օգտագործելով:

Շրջանաձև տնտեսությունը ավելին է քան պարզապես վերամշակումը, այն բազմաշերտ և դինամիկ երևույթ է, որը տնտեսական պահանջներն է հարմարեցնում բնությանը, ոչ թե բնությունը՝ տնտեսությանը: Այս մոտեցումը ոչ միայն նվազեցնում է բնապահպանական ճնշումները, այլև խթանում է նորարարությունը, խնայում է ծախսերը և մեծացնում է բիզնեսի մրցունակությունը:

Հետազոտությունների համաձայն՝ շրջանաձև տնտեսության ներդրումը դրական ազդեցություն կունենա թե՛ շրջակա միջավայրի, թե՛ տնտեսության վրա: Եթե անցումը սկսվի արդեն այսօր, ապա մինչև 2030 թ. CO_2-ի արտանետումները կարող են նվազել շուրջ երկու անգամ, սպառողական ապրանքների արդյունաբերությունը տարեկան կխնայի մոտ 700 մլն ԱՄՆ դոլար նյութական ծախսերում, իսկ նորարարական դիզայնի, բիզնես մոդելների, հետազոտությունների, վերամշակման և արտադրանքի մշակման ոլորտներում կստեղծվեն զգալի թվով նոր աշխատատեղեր:

Շրջանաձև տնտեսություն. սահմանումներ

«Շրջանաձև տնտեսությունը արդյունաբերական համակարգ է, որը վերականգնվում կամ վերականգնում է նախապես մտադրված և նախագծված կերպով: Այն արտադրանքի օգտագործման վերջի գաղափարը փոխարինում է վերականգնմամբ, անցնում է վերականգնվող էներգիայի օգտագործմանը, վերացնում է թունավոր քիմիական նյութերի օգտագործումը, որոնք խաթարում են վերաօգտագործումը և վերադառնում են կենսոլորտ...»:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

«Շրջանաձև տնտեսությունը համակարգ է, որը կենտրոնացած է թափոնների վերածվող նյութերի քանակի կտրուկ նվազման և վերականգնվող բնության վրա: Շրջանաձև տնտեսության մեջ ապրանքներն ու նյութերը շրջանառության մեջ են պահվում այնպիսի գործընթացների միջոցով, ինչպիսիք են սպասարկումը, վերօգտագործումը, վերանորոգումը, վերարտադրումը, վերամշակումը և կոմպոստացումը: Դրանում կենդանի, կենսաբանական, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսները միշտ պահպանվում և օգտագործվում են իրենց բարձրագույն հասարակական արժեքով»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԱՁԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՈԱԼԻՑԻԱ

«Շրջանաձև տնտեսություն» տերմինի ծագումը

«Շրջանաձև տնտեսություն» (Circular Economy) տերմինը որպես գիտական և քաղաքական հասկացություն ձևավորվել է 20-րդ դարի երկրորդ կեսին: Այն ունի տարբեր ակադեմիական արմատներ. համակարգային էկոլոգիա (systems ecology), արդյունաբերական էկոլոգիա (industrial ecology), և փակ նյութական հոսքերի մասին գաղափարներ: Տերմինը առաջին անգամ լայն շրջանառության մեջ դրվել է չինացի գիտնականներ Պիրլսոն ու Ֆուի (Pearlson & Fu) կողմից 1980-ականների վերջին, սակայն համընդհանուր ընդունված դարձավ միայն 1990-ականներին: Արևմուտքում այն կապվում է Դևիդ Պիրսի և Ռ. Քերիի (David W. Pearce and R. Kerry Turner) «Բնական ռեսուրսների և շրջակա միջավայրի տնտեսագիտություն» աշխատության հետ, որտեղ «շրջանաձև տնտեսություն» ասելով առաջարկվում էր փակ հոսքերի համակարգ՝ որպես հակադրություն գծային «վերցնել-արտադրե–նետել» մոդելին:
1990-ականների վերջին և 2000-ականների սկզբին տերմինը սկսեց ակտիվորեն կիրառվել եվրոպական ակադեմիական դիսկուրսում: Հատուկ դեր խաղաց Ellen MacArthur Foundation-ի գործունեությունը, որը շրջանաձև տնտեսությունը վերածեց գլոբալ տնտեսական քաղաքականության ուղղության: Այդ շրջանում CE-ն ընդունվեց որպես «բիզնեսի նոր տրամաբանություն»՝ արդյունավետ ռեսուրսների օգտագործում, թափոնների նվազեցում և նորարարական արտադրություն:

Կիրառումը միջազգային իրավական փաստաթղթերում

Շրջանաձև տնտեսության սկզբունքները ամրագրվում են նաև ազգային օրենսրության մակարդոկով. 2008 թ. Չինաստանը ընդունեց «Circular Economy Promotion Law»-ը, դառնալով առաջին երկիրը, որ պետական մակարդակով ամրագրեց տերմինը: Միջազգային մակարդակում CE-ն առաջին անգամ որպես կոնկրետ տերմին արձանագրվեց **ԵՄ պաշտոնական փաստաթղթերում**. 2015 թ. Եվրոպական հանձնաժողովը ընդունեց «Closing the loop – EU action plan for the Circular Economy» փաթեթը, որտեղ «circular economy»-ն արդեն հստակ ձևակերպված քաղաքական ուղղություն էր:
Ավելի ուշ տերմինը ամրագրվեց նաև **ՄԱԿ-ի մակարդակով**. 2019 թ. UNEA-4 (ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ասամբլեա) ընդունեց բանաձևեր, որտեղ «circular economy»-ն հստակ նշվում է որպես կայուն արտադրության և սպառման հիմնական գործիք:
Վերջին տարիներին CE-ն տեղ է գտել նաև ԵՄ կանաչ գործարքի (European Green Deal, 2019) և SDG-ների իրականացման շրջանակներում: Այսօր այն դիտարկվում է ոչ միայն որպես տնտեսական մոդել, այլև որպես իրավական և քաղաքական մոտեցում՝ կլիմայական և բնապահպանական քաղաքականության մաս:

ԿԱՆԱՉ, ԿԱՅՈՒՆ, ՇՐՋԱՆԱՁԵՎ. Ո՞ՐՆ Է ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Հաճախ ռազմավարական փաստաթղթերում, զեկույցներում ու մեդիայում կանաչ, կայուն և շրջանաձև տնտեսություն եզրույթները հանդիպում են կողք կողքի: Դա տրամաբանական է, քանի որ տերմինները փոխկապակցված են և բոլորն էլ վերաբերում են տնտեսությունը ավելի ռեսուրսախնայող ու պատասխանատու դարձնելուն: Բայց լրագրողի համար կարևոր է տարբերակել, թե որ տերմինն ինչ է ընդգծում:

Կայուն տնտեսություն (Sustainable Economy)

Սա ամենալայն, այսպես ասած «անձրևանոցային» հասկացությունն է: Կայուն տնտեսությունը միավորում է երեք հիմնական սկզբունք՝ **տնտեսական աճ**, **սոցիալական ներառականություն** և **բնապահպանական հավասարակշռություն**: Այն ապահովում է, որ ներկա սերունդների կարիքները բավարարվեն՝ առանց սպառելու ապագա սերունդների հնարավորությունները: Այս մոտեցումն ամրագրված է ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներում (SDGs)՝ որպես համաշխարհային օրակարգի առանցք (United Nations, SDGs):

Կանաչ տնտեսություն (Green Economy)

Կանաչ տնտեսությունը հիմնականում բնապահպանական ուղղվածություն ունեցող մոդել է: Այն շեշտը դնում է ածխածնային արտանետումների նվազեցման, վերականգնվող էներգիայի զարգացման, ռեսուրսների խնայողության և էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների ներդրման վրա: Այս մոտեցման սահմանումը տվել է UNEP-ը. «Կանաչ տնտեսությունը այն տնտեսությունն է, որը հանգեցնում է մարդկանց բարեկեցության և սոցիալական արդարության աճին, միաժամանակ զգալիորեն նվազեցնելով բնապահպանական ռիսկերը և էկոլոգիական ճնշումները»:

Շրջանաձև տնտեսություն (Circular Economy)

Շրջանաձև տնտեսությունը կարելի է համարել կայունության գործնական մեթոդաբանություն: Այն առաջարկում է կոնկրետ գործիքակազմ՝ **վերօգտագործում**, **վերանորոգում**, **վերամշակում**, **վերարտադրում**: Եթե գծային մոդելը կառուցված է «վերցնել–արտադրել–դեն նետել» տրամաբանության վրա, ապա շրջանաձև մոդելը՝ **«վերցնել–օգտագործել–վերականգնել»:**

Կենսատնտեսություն (Bioeconomy)

Այս համատեքստում կա նաև մի տերմին, որը հանրային շրջաններում այնքան էլ լայն կիրառություն չունի, բայց շատ է օգտագործվում մասնագիտական գրականության մեջ՝ **կենսատնտեսություն**: Կենսատնտեսությունը կենտրոնանում է **կենսաբանական ռեսուրսների օգտագործման և վերարտադրության** վրա՝ գյուղատնտեսություն, անտառտնտեսություն, կենսավառելիք, կենսաբանական նյութերի արտադրություն: Սակայն միջազգային հետազոտությունները զգուշացնում են՝ եթե կենսաբանական ռեսուրսները դիտվեն որպես անսահման, կենսատնտեսությունը նույնպես կարող է անկայուն դառնալ:

Եթե շատ պարզ, ապա.

- **Կայուն տնտեսությունը** ներկայացնում է լայնագույն շրջանակը՝ նպատակն ու հավասարակշռության փիլիսոփայությունը:
- **Կանաչ տնտեսությունը** շեշտը դնում է բնապահպանական ուղղվածության վրա:
- **Շրջանաձև** տնտեսությունը առաջարկում է գործնական մեխանիզմներ ու գործիքակազմ:
- **Կենսատնտեսությունը** մասնագիտական մոտեցում է՝ կենսաբանական ռեսուրսների կառավարման ու նորարարական կիրառության համար:

Այս եզրույթների պարզ մեկնաբանությունն ու դրանց դրսևորումը տնտեսության մեջ կարելի է ծանոթանալ նաև Գայանե Աթոյանի «Շրջանաձև տնտեսություն» ուսումնական ձեռնարկում:

ՇՐՋԱՆԱՁԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ («R-սանդուղք»)

Գծային տնտեսության մեջ արտադրանքն անցնում է պարզ ուղի. հումքը վերցվում է, վերածվում է ապրանքի, օգտագործվում է և վերջնականապես դառնում թափոն: Այս համակարգում նյութի կյանքը ավարտվում է սպառմամբ, և արժեքի ստեղծումը հիմնված է նորից ու նորից արտադրելու վրա:

Շրջանաձև տնտեսության մոդելում նույն նյութը կարող է ունենալ տարբեր «կանգառներ» և նոր կյանքեր: Ապրանքը կարող է պահպանվել շրջանառության մեջ՝ **վերանորոգման**, **վերօգտագործման**, **վերավաճառքի**, **վարձույթի**, կամ էլ բաժանվել մասերի ու դառնալ նոր արտադրանքի հումք: Նույնիսկ այն, ինչ սովորաբար համարվում է թափոն, կարող է վերածվել ռեսուրսի: Այսպիսով՝ նյութերի ճանապարհը չի ավարտվում սպառմամբ. դրանք մի քանի անգամ վերադառնում են տնտեսություն՝ նվազեցնելով հումքի օգտագործումն ու թափոնների ծավալը:

Շրջանաձև տնտեսությունը գործնականում իրականացվում է հատուկ մեթոդաբանության միջոցով, որն առավել հաճախ ներկայացվում է որպես **«R-սանդուղք»**: Այս մոտեցումը մշակվել է եվրոպական հետազոտական և քաղաքական շրջանակներում (օր.՝ Netherlands Environmental Assessment Agency, European Environment Agency) և հետագայում կիրառվել տարբեր երկրների ազգային ռազմավարություններում: Սանդուղքը հիմնված է պարզ տրամաբանության վրա. որքան ավելի բարձր է ռազմավարությունը սանդուղքում, այնքան ավելի մեծ է ռեսուրսների խնայողության և շրջակա միջավայրի պահպանության ազդեցությունը: Այսինքն՝ առաջնահերթությունը տրվում է այն քայլերին, որոնք կանխում են թափոնների առաջացումը դեռ արտադրության փուլում, և միայն ամենավերջում դիտարկվում են էներգիայի վերականգնումը կամ այրումը:

Պայմանական խմբեր

Ռազմավարությունները բաժանվում են երեք խոշոր խմբի.

1. Կանխարգելում և արդյունավետություն – այն գործողությունները, որոնք ուղղված են նյութերի ու ռեսուրսների սկզբնական օգտագործման կրճատմանը:
2. Ապրանքի կյանքի երկարացում – մեխանիզմներ, որոնցով արդեն օգտագործվող ապրանքները պահվում են շրջանառության մեջ:
3. Վերականգնում թափոններից – այն ռազմավարությունները, որոնք թույլ են տալիս թափոնները վերածել նոր ռեսուրսների կամ էներգիայի:

Ռազմավարությունների համառոտ նկարագրություն

Հրաժարում (Refuse) – հրաժարվել այնպիսի ապրանքներից կամ նյութերից, որոնք անհրաժեշտ չեն կամ ունեն բարձր բնապահպանական վնաս:
Օրինակ՝ արտադրությունում բացառել միանգամյա պլաստիկի օգտագործումը և փոխարինել բազմակի օգտագործվող նյութերով:

Վերանախագծում (Redesign) – արտադրանքը նախագծել այնպես, որ այն ավելի քիչ նյութ ծախսի և հեշտ վերանորոգվի:
Օրինակ՝ կահույք արտադրել մոդուլային կառուցվածքով, որպեսզի հնարավոր լինի մասերը հեշտությամբ փոխարինել:

Վերաիմաստավորում (Rethink) – փոխել օգտագործման մոդելը՝ սեփականությունից դեպի ծառայության մոդել:
Օրինակ՝ գյուղատնտեսական տեխնիկայի կոլեկտիվ վարձույթ՝ յուրաքանչյուր ֆերմերի փոխարեն առանձին սարք գնելու:

Նվազեցում (Reduce) – արտադրության և սպառման մեջ օգտագործվող հումքի ծավալի կրճատում:
Օրինակ՝ թեթև փաթեթավորման օգտագործում սննդի արդյունաբերությունում:

Վերօգտագործում (Reuse) – արտադրանքի կամ նրա բաղադրիչների երկրորդական օգտագործում:
Օրինակ՝ ապակե շշերի վերադարձի համակարգ:

Վերանորոգում (Repair) – վնասված արտադրանքի վերանորոգում՝ այն կրկին օգտագործելու համար:
Օրինակ՝ կենցաղային տեխնիկայի վերանորոգման ծառայությունների հասանելիություն համայնքներում:

Վերականգնում (Refurbish) – արտադրանքի ամբողջական նորոգում ու արդիականացում՝ ավելի երկար կյանք ապահովելու համար:
Օրինակ՝ հին համակարգիչների տեխնիկական արդիականացում կրթական հաստատություններում:

Վերարտադրում (Remanufacture) – օգտագործված մասերից նոր արտադրանք հավաքել:
Օրինակ՝ ավտոմեքենաների շարժիչների վերարտադրում՝ հին մասերից:

Վերաուղղում (Repurpose) – օգտագործված արտադրանքի նոր կիրառություն գտնել:
Օրինակ՝ հին ավտոմեքենայի անվադողերից խաղահրապարակների ծածկույթ:

Վերամշակում (Recycle) – թափոնների վերամշակում՝ նոր հումք ստանալու նպատակով:
Օրինակ՝ թղթի թափոններից նոր թղթի արտադրություն:

Էներգիայի վերականգնում (Recover) – թափոնների այրում՝ էներգիա ստանալու համար:
Օրինակ՝ չվերամշակվող պլաստիկից ջերմաէներգիայի ստացում:

Ռազմավարությունների մանրամասն նկարագրությունները օրինակներով՝ այստեղ:

ՇՐՋԱՆԱՁԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ. ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում շրջանաձև տնտեսության ընդհանուր պատկերը ներկայացնող համապարփակ հետազոտություններ դեռևս չեն իրականացվել, սակայն մասնագիտական տարբեր խմբերի կողմից տարբեր ոլորտներում դաշտի ուսումնասիրություն և պոտենցիալի գնահատում կատարվում է: Որոշ դեպքերում այդ հետազոտության արդյունքները հրապարակային չեն և նախատեսված են բացառապես ոլորտային ծրագրերի մշակման և իրականացման համար:

Միևնույն ժամանակ բիզնես գործընթացների դիտարկումները ցույց են տալիս, որ Հայաստանում տարբեր ընկերություններ հաճախ կիրառում են շրջանաձև տնտեսության սկզբունքները՝ առանց այդպես ձևակերպելու: Շատ դեպքերում դրանք ներդրվում են ռեսուրսների խնայողության անհրաժեշտությունից ելնելով. արդյունքում ստացվում է, որ բիզնեսը փաստացի փորձ ունի շրջանաձև մեխանիզմների կիրառման, սակայն դրանք դիտարկվում են որպես ծախսերի նվազեցման միջոց, ոչ թե համակարգային ռազմավարություն:

Շրջանաձևությունը փոքր և միջին ձեռնարկությունների միջավայր

Հայաստանյան բիզնես համայնքում ՇՏ գաղափարը դեռ նոր է ձևավորվում, սակայն արդեն առկա են քաղաքական ուղենիշներ և ծրագրեր: Կառավարության միջնաժամկետ ռազմավարություններում նշվում է, որ շրջանցիկ և կանաչ լուծումները կարող են խթանել մրցունակությունը, ներդրումները և աշխատատեղերի ստեղծումը: Միևնույն ժամանակ, ենթակառուցվածքների ու համակարգային լուծումների պակասը շարունակում է խոչընդոտել ոլորտի զարգացումը, օրինակ՝ թափոնների տեսակավորման և վերամշակման համար բավարար պայմաններ չկան:

«Շրջանաձև տնտեսությունը և ՓՄՁ-ները Հայաստանում» հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ փոքր և միջին ձեռնարկությունների համար ինստիտուցիոնալ աջակցությունը հիմնականում սահմանափակվում է խորհրդատվական և ֆինանսական գործիքներով: Շրջանաձև տնտեսության գործիքների մասին իրազեկվածությունը ցածր է, իսկ միջազգային չափանիշներին համապատասխան էկոսերտիֆիկատները գրեթե չեն կիրառվում: Կանաչ տեխնոլոգիաների ու ռեսուրսների արդյունավետության ծրագրերը առկա են, բայց դրանք դեռ հիմնականում գործարկվում են խոշոր ընկերությունների կամ միջազգային դոնորական նախաձեռնությունների միջոցով:

Տնտեսության առանձին ճյուղեր առանձնանում են իրենց ներուժով: Սննդի արդյունաբերությունը, որը կազմում է արդյունաբերության զգալի մասը, կարող է զարգացնել թափոնների վերամշակման և էներգիայի խնայողության նոր մեխանիզմներ: Տեքստիլը, թեև փոքր, բայց արագ աճող ոլորտ է, որտեղ հնարավոր են վերանորոգման, վերամշակման և վարձույթի մոդելներ: Զբոսաշրջությունը նույնպես դիտվում է որպես ուղղություն, որտեղ շրջանցիկ մոտեցումները կարող են ամրապնդել կայունությունն ու նորարարությունը:

Հետազոտողները նաև առանձնացվել են այն հիմնական խոչընդոտները, որոնք սահմանափակում են ՓՄՁ-ների կողմից շրջանաձև տնտեսության բիզնես մոդելների ինտեգրումը:

Այս խոչընդոտները կարելի է ներկայացնել հետևյալ խմբերով.

- պետական աջակցության և արդյունավետ իրավական դաշտի բացակայություն,
- տեղեկատվության ու ռեսուրսների սահմանափակ մատչելիություն,
- տեխնիկական և տեխնոլոգիական գիտելիքի պակաս,
- ընկերությունների մոտ ձևավորված թույլ բնապահպանական մշակույթ,
- կանաչ արտադրանքի նկատմամբ շուկայական պահանջարկի անբավարարություն,
- պահանջարկի և մատակարարման շղթաների կողմից աջակցության բացակայություն,
- ֆինանսական ռեսուրսների սղություն:

Այսպիսով, ընդհանուր պատկերը ցույց է տալիս, որ Հայաստանում շրջանաձև տնտեսության գաղափարները ճանաչված են, սակայն դեռևս լիովին չեն ինտեգրվել ՓՄՁ միջավայրում: Ապագա քայլերը պետք է ուղղվեն նպատակային ծրագրերի և ֆինանսական ու կարգավորող մեխանիզմների մշակմանը, որոնք կօգնեն փոքր ու միջին բիզնեսին ոչ միայն նվազեցնել ծախսերը և բարձրացնել մրցունակությունը, այլև ունենալ դրական ազդեցություն միջավայրի ու հասարակության վրա:

«Շրջանաձև տնտեսությունը և ՓՄՁ-ները Հայաստանում» հետազոտությունը վերլուծում է ՓՄՁ-ների շրջանում առկա շրջանաձևության մակարդակը և բացահայտում այն խոչընդոտները, որոնք խանգարում են ՓՄՁ-ներին կիրառել շրջանաձև բիզնես մոդելներ: Փաստաթուղթը կենտրոնանում է երեք հեռանկարային ոլորտների վրա՝ **սննդի վերամշակում, զբոսաշրջություն և տեքստիլ արդյունաբերություն**: Ընդգծելով այս ոլորտների անցման ներուժը՝ այն վերլուծում է շրջանաձև տնտեսության հնարավոր բիզնես առավելությունները ՓՄՁ-ների համար և ներկայացնում քաղաքականություն մշակողների համար ձևավորված առաջարկություններ:

Այս հետազոտությունը, որը կատարվել է դեռևս 2022-ին Եվրոպական միության ֆինանսավորմամբ իրականացվող CIRCUL-UP! ծրագրի շրջանակում, Ծրագրի գործընկեր «Շրջակա միջավայր և առողջություն» ՀԿ-ի կողմից շարունակում է մնալ այս ոլորտում անցկացված ամենաթարմ աշխատանքներից մեկը:

Ներկայացված տվյալները կարող են օգտակար լինել ինչպես քաղաքականությունների մշակման, այնպես էլ նախաձեռնությունների ազդեցության ու կայունության գնահատման համար: Դա հատկապես ակտուալ է, քանի որ շրջանաձևության սկզբունքների տարածման պայմաններում որոշ խնդիրներ ոչ միայն պահպանվել են, այլև ավելի ակնհայտ են դարձել: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ արդեն իսկ որոշ բիզնես ընկերություններ սկսել են շրջանաձև մոդելների գիտակցված ներդրումը և լրագրողները հնարավորություն ունեն դիտարկել վերջին տարիների պրակտիկան և ցույց տալ հետազոտությամբ արձանագրված խոչընդոտներն ու պոտենցիալը արդեն իրական բիզնես օրինակների միջոցով:

2025 թ.-ի աշնանը նույն Եվրոպական միության CIRCUL-UP! ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել ավելի լայնամասշտաբ հետազոտություն՝ ուրվագծելով Հայաստանյան ՇՏ գործընթացների ընդհանուր պատկերն ու պոտենցիալը:

«Շրջանաձև տնտեսությունը և ՓՄՁ-ները Հայաստանում» հետազոտությանը՝ այստեղ:

Արտադրողի ընդլայնված պատասպանատվության համակարգը որպես շրջանաձև տնտեսության խթանող գործիք

Այս փուլում թերևս ամենանշանակալի գործընթացը Արտադրողի ընդլայնված պատասխանատվության ինստիտուտի ներդրմանն ուղղված գործընթացներն են: ՀՀ Կառավարությունը արդեն հավանություն է տվել «Արտադրողի ընդլայնված պատասխանատվության մասին» օրենքի նախագծին և առաջիկայում այս ոլորտը Հայաստանում իրավական կարգավորում կստանա: Արտադրողի ընդլայնված պատասխանատվության (ԱԸՊ) օրենսդրությունը մշակել է ՀՀ շրջակա միջավայր նախարարությունը Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Յակոբեան բնապահպանական կենտրոնի աջակցությամբ՝ Շվեդիայի կողմից ֆինանսավորվող «Հայաստանում թափոնների կառավարման քաղաքականություն» ծրագրի շրջանակում:

Այս նախաձեռնությունը բխում է ՀՀ կառավարության՝ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) շրջանակներում ստանձնած հանձնառությունից՝ մոտարկել ազգային օրենսդրությունը ԵՄ պահանջներին: Արտադրողի ընդլայնված պատասխանատվության (ԱԸՊ) ինստիտուտը ավելի լայն է, քան պարզապես թափոնների կառավարումը. այն բնապահպանական նպատակներից զատ ներառում է նաև հստակ տնտեսական բաղադրիչներ: ԵՄ-ում ԱԸՊ-ն դիտարկվում է որպես հիմնական քաղաքական գործիք, որը պետություններին հնարավորություն է տալիս անցում կատարելու գծային տնտեսությունից դեպի շրջանաձև տնտեսություն:

- **Ֆինանսական բեռի վերաբաշխում.** «Աղտոտողը վճարում է» սկզբունքի կիրառման միջոցով թափոնների կառավարման ծախսերը տեղափոխվում են արտադրողների վրա՝ ապահովելով կայուն ֆինանսավորում և անհրաժեշտ ռեսուրսների ձևավորում:
- **Շրջանաձև տնտեսության խթանում.** ԱԸՊ-ն զարգացնում է վերամշակման արդյունաբերությունը, ստեղծում նոր շուկաներ երկրորդային հումքի համար և բարձրացնում դրանց մրցունակությունը:
- **Նոր «կանաչ» աշխատատեղեր.** հավաքման, տեսակավորման և վերամշակման ոլորտների զարգացումը նպաստում է թափոնների կառավարման համակարգում աշխատատեղերի ավելացմանն ու զբաղվածության աճին:

«Հայաստանում թափոնների կառավարման քաղաքականություն» ծրագրի մասին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ այստեղ:

Շրջանաձև տնտեսություն. ոլորտը համակարգող պետական դերակատարներ

Շրջանաձև տնտեսություն համակարգային իմաստով շատ բազմաշերտ է և ոլորտին առնչվող տարբեր դերակատարներ կան: Սակայն պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից մի քանիսն անմիջականորեն առնչվում են համակարգի ներդրման և /կամ դրան նպաստող քաղաքականության մշակման գործընթացին: Այս պետական կառույցները որպես կանոն ներգրավված են նաև ոլորտային միջազգային ծրագրերում որպես հիմնական գործընկեր: Նրանց թվում թերևս առավել կարևոր դերակատարություն ունեն երեք նախարարություն՝ իրենց փոխկապակցված կառույցներով:

Էկոնոմիկայի նախարարություն ⚭ mineconomy.am

ՀՀ տնտեսության զարգացման հիմնական լիազոր մարմինն է. պատասխանատու է տնտեսական քաղաքականության մշակման, ներդրումային միջավայրի ձևավորման և միջազգային համագործակցության համար: ՇՏ թեմաներով նախաձեռնությունների հիմնական պետական գործընկերն է: Հատուկ այս ոլորտի համար պատասխանատու ստորաբաժանում չկա, սակայն լրատվամիջոցների հետ աշխատող ստորաբաժանումը, կախված թեմայից կարող է հեշտությամբ ուղղորդել հենց այն մասնագետների մոտ, որոնք ներգրավված է կոնկրետ գործընթացում: Այս նախարարության ենթակայության տակ է գործում նաև Զբոսաշրջության կոմիտեն, որը համակարգում է Հայաստանի զբոսաշրջության ոլորտը. այն համարվում է Շրջանաձև տնտեսության զարգացման մեծ պոտենցիալ ունեցող ուղղություններից մեկը:

Շրջակա միջավայրի նախարարություն ⚭ env.am

ՀՀ բնապահպանական քաղաքականություն մշակող հիմնական մարմինն է, որն առանցքային դեր ունի կանաչ և կայուն տնտեսությանն ուղղված քաղաքականությունների ձևավորման մեջ: ՇՄՆ-ն պետական քաղաքականությունների մշակման գործընթացում ներկայացնում է «բնության շահերը» և ապահովում է բնապահպանական բաղադրիչի ներառումը տնտեսության տարբեր ոլորտներում: Նախարարությունը Հայաստանում իրականացվող բնապահպանական համակարգային փոփոխություններ նախատեսող ծրագրերի հիմնական գործընկերն է, ինչպես նաև իրականացնում է ոլորտային մի շարք ծրագրեր իր կազմում գործող «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի միջոցով: Ներկայում ՇՄՆ-ն համակարգում է ՇՏ-ի

համատեքստում կարևոր գործընթացներից մեկը՝ Արտադրողի ընդլայնված պատասխանատվության (EPR) ինստիտուտի ներդրման քաղաքականության մշակման գործընթացը:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն mtad.am

ՏԿԵՆ-ը պատասխանատու է Հայաստանի թափոնների կառավարման քաղաքականության, էներգետիկայի և ենթակառուցվածքների զարգացման համար՝ ապահովելով ոլորտային ռազմավարությունների իրականացումն ու վերահսկողությունը: Շրջանաձև տնտեսության համատեքստում նախարարության առանցքային փաստաթուղթը թերևս «Հայաստանի Հանրապետության 2017–2036 թվականների կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարությունն» է, որը սահմանում է տեսակավորման, վերամշակման և աղբավայրերի փակման երկարաժամկետ նպատակները: ՏԿԵՆ-ը նաև համակարգում է էներգետիկ քաղաքականությունը, ներառյալ վերականգնվող էներգիայի խթանումը և էներգաարդյունավետության ծրագրերը: Բացի այդ, նախարարությունն ունի կարևոր դեր համայնքներում ՇՏ-ին առնչվող քաղաքականությունների տարածման և գործնական իրականացման ապահովման հարցում՝ համագործակցելով տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

ՇՐՋԱՆԱՁԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ՝ ԱՂՔԱՏՈՒԹՅՈ՞Ւ, ԹԵ՞ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԻ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի մշակութային առանձնահատկությունները նշանակալի ազդեցություն ունեն շրջանաձև տնտեսության գաղափարների ընկալման և կիրառման վրա: Քանի որ երկիրը պատմականորեն գոյատևել է սահմանափակ ռեսուրսների պայմաններում, սոցիալական և տնտեսական պրակտիկաները ձևավորվել են խնայողականության տրամաբանության հիմքի վրա: Այդպիսի բնական «վերագործարկումները»՝ կոշկակարի ու դերձակի ծառայությունները, հագուստի և տեխնիկայի վարձույթն ու վերանորոգումը, Հայաստանում ունեցել են երկարատև պատմություն՝ որպես գոյատևման և միմյանց աջակցության մեխանիզմներ:

Այսօր արդեն նույն այդ պրակտիկաները, երբ ներկայացվում են որպես ժամանակակից շրջանաձև տնտեսության մաս, հաճախ հասարակության մի հատվածի կողմից ընկալվում են ոչ թե որպես նորարարական կամ բնապահպանական մոտեցումներ, այլ որպես աղքատության և ռեսուրսների սղության դրսևորում: Այն, ինչը Եվրոպայում կամ այլ երկրներում դառնում է թրենդային ու բարձր արժևորված, օրինակ վերօգտագործումը կամ վարձույթը, Հայաստանում դեռևս կապվում է սոցիալական կարգավիճակի հետ: Արդյունքում վերանորոգման ծառայություններից օգտվելը կամ նմանատիպ լուծումներն ընտրելը հաճախ դիտարկվում են որպես «վերջին տարբերակ», ոչ թե որպես գիտակցված, նորարար և պատասխանատու ընտրություն:

Այս հակասությունը լուրջ խնդիր է ստեղծում բիզնեսի և քաղաքականության համար: Ընկերությունները և համայնքային նախաձեռնությունները, որոնք նպատակ ունեն ռեսուրսների արդյունավետ օգտագործում ապահովել և նվազեցնել թափոնները, բախվում են սպառողների մշակութային դիմադրությանը: Հետևաբար ՇՏ հայեցակարգի ներդրման համար անհրաժեշտ են ոչ միայն ենթակառուցվածքային փոփոխություններ և տնտեսական խթաններ, այլև դերակատարների միջև սինքրոնացված և հետևողական հաղորդակցական աշխատանքներ՝ շրջանաձև տնտեսական լուծումները հասարակության լայն շերտերի համար և՛ հասկանալի, և՛ ընդունելի դարձնելու:

Այս համատեքստում լրագրողների դերն էլ ավելի կարևոր է դառնում. մարդկային ազդեցիկ պատմություններն ու այս բարդ խնդիրների մասին մատչելի լեզվով պատումները կարող են ցույց տալ, որ վերանորոգումը, վերօգտագործումը և վարձույթը կարող են ոչ թե աղքատության, այլ ժամանակակից և պատասխանատու գործելակերպի նշան լինել: Իհարկե այս նարատիվների տարածման համար անհրաժեշտ կլինի նաև ուղղորդված իրազեկման և կրթական արշավներով, բիզնեսի կողմից բրենդային ռազմավարությունների փոփոխություն, սակայն հենց լրագրողական համայնքի աշխատանքն է, որ կարող է բարենպաստ տեղեկատվական միջավայր ստեղծել, ուժեղացնել կամ թուլացնել այդ արշավների ազդեցությունը:

ՇՏ ԹԵՄԱՅՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում շրջանաձև տնտեսության զարգացումը նախ և առաջ շարժվում է միջազգային ծրագրերի ու նախաձեռնությունների շնորհիվ: Դա պայմանավորված է մի քանի գործոններով. նախ, **ԵՄ-ն և այլ միջազգային կազմակերպություններ** այս թեման դիտարկում են որպես իրենց ռազմավարական շահերի մաս, և մեծ ուշադրություն են դարձնում հարևան երկրներում ոլորտի ձևավորմանը: Հայաստանի համար սա նշանակում է ռեսուրսների, ֆինանսավորման և փորձի ներհոսք:

Միջազգային ծրագրերը Հայաստանում գործում են երկու հիմնական ուղղությամբ.

- **Հանրային իրազեկում և կրթություն** – բարձրացնել հասարակության տեղեկացվածությունը շրջանաձև տնտեսության մասին, ձևավորել նոր ընկալումներ և վարքագծային փոփոխություններ:
- **Բիզնեսի աջակցություն և փորձարկումներ** – զարգացնել բիզնես համայնքի կարողությունները, փոխանցել գիտելիք և հմտություն շրջանաձև մոդելների վերաբերյալ, տրամադրել ֆինանսական և խորհրդատվական աջակցություն, որպեսզի նրանք փորձարկեն նորարարական լուծումներ և ստեղծեն հաջող օրինակներ:

Բացի այդ, այս ծրագրերը Հայաստանում նպատակ ունեն **միջազգային լավագույն փորձը տեղայնացնել**՝ ցույց տալով թե ինչպես կարելի է այդ մոդելները կիրառել մեր իրականության մեջ: Մյուս կողմից՝ դրանք աշխատում են նաև պետական կառույցների հետ՝ իրենց ձեռքբերումներով ու արդյունքներով հիմք ստեղծելով քաղաքականության մշակման համար և ցույց տալով պետության դերի կարևորությունը ոլորտի զարգացման գործում:

Պետական մակարդակով առայժմ **շրջանաձև տնտեսությանն ուղղված առանձին ռազմավարական փաստաթուղթ կամ ծրագիր չկա**, սակայն կատարվում են մի շարք քայլեր, որոնք ստեղծում են բարենպաստ պայմաններ դրա համար (օրինակ՝ թափոնների կառավարման բարեփոխումներ, կանաչ էներգիայի խթանում, մաքուր արտադրության աջակցություն): Իսկ արդեն ոլորտային ծրագրերից առաջիններից է **CirculUP! նախաձեռնությունը**, որը համատեղում է հասարակության իրազեկումը, բիզնեսի աջակցությունը և պետական կառույցների ներգրավումը՝ ձևավորելով հայաստանյան կոնկրետ օրակարգ:

Նման նախաձեռնությունները հիմնականում ուղղված են փոքր և երբեմն միջին բիզնեսին, սակայն բիզնես մշակույթում մեծ փոփոխություններ և լայն ազդեցություն ապահովելու համար առավել արդյունավետ կլիներ նաև մեծ ընկերությունների ակտիվ ներգրավվածությունը: Հետաքրքիր է, որ որոշ դեպքերում խոշոր ընկերությունները հանդես են գալիս ոչ թե որպես ուղղակի շահառուներ, այլ որպես գործընկերներ, որոնք

իրենց ֆինանսական աջակցությամբ խրախուսում են տարբեր ստարտափերի: Վերջիններս առաջարկում են նորարարական լուծումներ և գործիքներ շրջանաձևության համատեքստում:

Շրջանաձև տնտեսության ոլորտում Հայաստանում մեկնարկած առաջին խոշոր ծրագրերից մեկը CirculUP!. Հայաստանում շրջանաձև տնտեսության հանրայնացման կարողությունների զարգացում և իրազեկվածության բարձրացում» ծրագիրն է: Այս նախաձեռնության շրջանակում մշակվել է թեմատիկ www. circulup.am կայքը, որը կարող է դառնալ օգտակար ռեսուրս մեդիա բովանդակություն ստեղծողների համար:

Օգտակար ռեսուրսներ

Կայքի «Ռեսուրսներ» բաժնում հասանելի են հայերեն և անգլերեն տեքստային ու վիդեո բացատրական նյութեր, ինչպես նաև ուղեցույցներ: Կայքի առանձին ենթաէջում ներկայացված են նաև ծրագրի շրջանակում դրամաշնորհ ստացած բիզնես ընկերությունները, որոնք կարող են ծառայել որպես հետաքրքիր օրինակներ՝ իրական պատմություններով շրջանաձև տնտեսության մասին բովանդակություն ստեղծելու համատեքստում: Այս կազմակերպությունները շրջանաձևության մոդելների ներդրման ակտիվ փուլում են և կարող են լրագրողական պատմությունների հետաքրքիր հերոս դառնալ ոչ միայն արդյունքը ցույց տալու, այլև ընթացքը ներկայացնելու համար:

Պետք է հաշվ առնել, որ այս բաժինները ծրագրին համընթաց պարբերաբար թարմացվում են: Բացի այդ, կայքում տեղադրվում են նաև այլ կազմակերպությունների կողմից ծրագրի շրջանակում մշակված թեմատիկ նյութեր, որոնք հիմնականում նախատեսված են հանրային իրազեկման նպատակով և կարող են օգտակար լինել ոլորտի վերաբերյալ ընդհանուր պատկեր ստանալու համար:

Շրջանաձև տնտեսության կոալիցիա

Կայքը կարող է օգտակար լինել նաև փորձագիտական համայնքի ինֆորմացիոն աղբյուրներ գտնելու համար: Ծրագրի շրջանակում ձևավորվել է Հայաստանում շրջանաձև տնտեսության կոալիցիա: Թեև այն դեռևս պաշտոնական գրանցում չունի, բայց գործում է որպես մասնագիտական համայնք՝ ոլորտի դերակատարների միջև երկխոսության և ծրագրի շրջանակում մեկնարկած գործընթացների շարունակականության ապահովման նպատակով:

Այս պահին Հայաստանի շրջանաձև տնտեսության կոալիցիան (ACEC) միավորում է ոլորտին առնչվող տարբեր կազմակերպությունների 15 ներկայացուցիչ փորձագետների: Յուրաքանչյուր մասնակից կոալիցիայում ներկայացնում է ոչ միայն իր անհատական փորձառությունը, այլև այն կազմակերպությունների գիտելիքը և փորձը, որտեղ աշխատում է: Նրանցից շատերը ներգրավված են նաև որպես փորձագետներ՝ ՇՏ-ին առնչվող տարբեր միջազգային ծրագրերում: Այս հանգամանքի շնորհիվ նրանք միաժամանակ ունեն ոլորտի մասին ամբողջական և համակարգային պատկերացում, բայց և իրենց մասնագիտացումից ելնելով անընդհատ շփվում են թիրախային տարբեր խմբերի հետ և թարմացնում առկա վիճակի և գործող պրակտիկ դաշտի մասին ունեցած տեղեկությունները:

Այս ամենը կոալիցիայի անդամներին դարձնում է արժեքավոր աղբյուր լրագրողական համայնքի համար. նրանք կարող են տրամադրել տեղեկություններ, մեկնաբանություններ, օգնել ոլորտային կոնտեքստը ճիշտ հասկանալու, տվյալները վերլուծելու, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, դեպի համապատասխան նյութեր և մասնագետներ ուղղորդելու տեսանկյունից:

Կոալիցիայի մասին կայքում առանձին ենթաէջ կա: Կոալիցիայի կառուցվածքին, անդամներին և նրանց գործունեության շրջանակին կարող եք ծանոթանալ [այստեղ](#):

Միջազգային ծրագրերի օրինակներ

Վերջին տարիներին Հայաստանում իրականացվող մի շարք միջազգային ծրագրեր այս կամ այն կերպ առնչվում են շրջանաձև տնտեսության ներդրման գործընթացին: Դրանք որպես կանոն կոչված են աջակցել կանաչ և կայուն տնտեսության զարգացմանը, բնական ռեսուրսների արդյունավետ կառավարմանը և տարբեր ոլորտներում քաղաքականությունների մշակմանն ու ներդրմանը: Այս նախագծերը իրականացվում են ՀՀ կառավարության հետ համագործակցությամբ, իսկ դրանց շրջանակում իրականացված հետազոտություններնը և մշակված փաստաթղթերը կարող են օգտակար լինել թեմային առնչվող բովանդակություն ստեղծելիս: Ստորև առանձնացրել ենք դրանցից մի քանիսը:

🔗 ace.aua.am **Հայաստանում թափոնների կառավարման քաղաքականություն:** Ծրագիրն իրականացնում է Հայաստանի ամերիկյան համալսարանի Յակոբյան բնապահպանական կենտրոնը: Շվեդիայի կողմից ֆինանսավորվող 4-ամյա ծրագիրը նպատակ ունի բարելավել Հայաստանի թափոնների կառավարման ոլորտը՝ բարձրացնելով թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման կարողությունները: Ծրագրի շրջանակում են մշակվել «Արտադրողի ընդլայնված պատասխանատվության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով ծրագիրն աջակցում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը իրականացնել Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի պահանջը: Միաժամանակ ծրագրով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համատեղ իրականացվում է Սևան քաղաքում և այլ համայնքներում սկզբնաղբյուրում թափոնների տեսակավորման համակարգի ներդրման գործընթաց: Յակոբյան բնապահպանական կենտրոնի պաշտոնական կայքում հասանելի են նաև մյուս ծրագրերի մասին տեղեկություններն ու դրանց շրջանակում մշակված նյութերը:

🔗 green-agenda.org **Կանաչ օրակարգ**: Ստոկհոլմի շրջակա միջավայրի ինստիտուտի (SEI) գլխավորությամբ և Շվեդիայի միջազգային զարգացման համագործակցության գործակալության (Sida) ֆինանսավորմամբ տարածաշրջանի միաժամանակ 4 երկրում իրականացվող ծրագիր է, որի առաքելությունն է նպաստել կանաչ անցմանը՝ քաղաքականությունը ԵՄ չափանիշներին համապատասխանեցնելու միջոցով: Ծրագրով նախատեսվում է առաջիկա տարիներին ՀՀ կառավարության հետ փոխգործակցությամբ մշակել և իրականացնել ճանապարհային քարտեզ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի պահանջներն առավել արդյունավետ կատարելու նպատակով: Ծրագրի պաշտոնական կայքում վերաբերելի փաստաթղթերի և նյութերի շարքում առանձնակի ուշադրության է արժանի ծրագրի առաջին փուլում մշակված «Հայաստանի կանաչ անցման ազգային համապարփակ գնահատման զեկույցը»:

🔗 giz.de/en/regions/europe/armenia **Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը (GIZ)** ևս այս ոլորտում ներդրումներ անող միջազգային կազմակերպություն է: Այս պահին GIZ-ը իր հայաստանյան գրասենյակի և տեղական այլ կազմակերպությունների միջոցով Հայաստանում իրականացնում է ավելի քան 10 տարբեր ծրագրեր, որոնք ընդգրկում են երեք հիմնական ուղղություն. Ժողովրդավարություն և օրենքի գերակայություն, կլիմա և շրջակամիջավայրի պաշտպանություն, տնտեսություն և զբաղվածություն: Այս ծրագրերի հիմնական մասը ուղղակի կամ միջնորդավորված ձևով նպաստում են շրջանաձևության մշակույթի և գործիքակազմի տարածմանը Հայաստանում և կարող են հետաքրքիր տեղեկատվական աղբյուր լինել ոլորտը լուսաբանող լրագրողների համար: GIZ-ի կողմից ֆինանսավորվող ընթացիկ և արդեն իսկ ավարտված ծրագրերի թեմատիկ շրջանակին կարելի է ծանոթանալ գործակալության պաշտոնական կայքում.

Ոլորտը լուսաբանող լրագրողների համար հետաքրքիր կարող է ինել նաև EU4Environment (**«ԵՄ-ն՝ շրջակա միջավայրի համար»**) ծրագիրը, որն իրականացվում է Արեւելյան գործընկերության 6 երկրներում (Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա, Ուկրաինա), միտված է աջակցել կառավարություններին ու հասարակությանը՝ համատեղելով տնտեսական աճն ու շրջակա միջավայրի պաշտպանությունը: Ծրագրի արդյունքները կարևոր են նաև շրջանաձև տնտեսության առաջմղման համար, քանի որ դրանք ստեղծում են բարենպաստ միջավայր այն երկրների համար, որոնք ձգտում են անցում կատարել դեպի շրջակա միջավայրին համահունչ ու մրցունակ տնտեսություն:

Շրջանաձև տնտեսության թեմայով մեդիա բովանդակություն ստեղծելու համար օգտակար ծրագրերն ու կազմակերպությունները բազմաթիվ և բազմազան են: Եթե դրանք դիտարկվեն ոչ թե միայն կոնկրետ ծրագրային գործողությունների ընթացքը նկարագրելու, այլև ՇՏ-ի վրա դրանց ազդեցությունը վերլուծելու համատեքստում, ապա յուրաքանչյուր ծրագիր կարող է առաջարկել թեման լուսաբանելու հետաքրքիր և թարմ դիտակետ:

Ծրագրերը նաև հետաքրքիր փորձագետների և բանախոսներ գտնելու հրաշալի հնարավորություն են տալիս. այս դեպքում սակայն լրագրողական հմտություն է պետք մարդկային այդ ռեսուրսը ճիշտ օգտագործելու համար, քանի որ երբեմն մեծ ծրագրերի փորձագետները կաշկանդված են ծրագրի շրջանակում հավաքագրված տվյալները ազատորեն տարածելու հարցում, սակայն երկարաժամկետ էթեիկական համագործակցության դեպքում, անգամ հանրայնացման սահմանափակության պայմաններում, նրանք կարող են հրաշալի խորհրդատու դառնալ լրագրողների համար՝ ներկայացնելով ընդհանուր համատեքստն ու հուշելով թե հատկապես մասնագիտական և փորձագիտական որ օղակները կարող են դառնալ վստահելի աղբյուր և ինչի վրա պետք է ուշադրություն դարձնել այդ տվյալների հետ աշխատելիս:

ՄԵԴԻԱՅԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՇՐՋԱՆԱՁԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Շրջանաձև տնտեսության հայեցակարգի ներդրման և հանրայնացման գործընթացում մեդիան առանցքային դեր ունի: Լրատվամիջոցների գործառույթները կարելի է պայմանականորեն բաժանել մի քանի հիմնական ուղղությունների.

Իրազեկող գործառույթ

Շրջանաձև տնտեսությունը Հայաստանում բոլորովին նոր հասկացություն է թե՛ բիզնես համայնքի, թե՛ լայն հանրության համար: Այս համատեքստում մեդիան անփոխարինելի դեր ունի՝ բացատրելու, թե ինչ է շրջանաձև տնտեսությունը, ինչ խնդիրներ է փորձում լուծել և ինչ արժեքներ կարող է ստեղծել: Միաժամանակ ոլորտի դերակատարներն իրենց առաջին ակտիվ քայլերն են անում, ուստի կարևոր է հանրությանը ներկայացնել նրանց ծրագրերն ու արդյունքները:

Չնայած բիզնես համայնքն է առաջինը կիրառում ՇՏ սկզբունքները, նրանց վարքագծի վրա մեծ ազդեցություն ունեն սպառողների ընկալումները: Հետևաբար հանրային իրազեկումը ոչ միայն անհրաժեշտություն է, այլև կարևոր նախապայման ՇՏ համակարգի ներդրման և կայուն զարգացման համար:

Միաժամանակ կարևոր է արձանագրել, որ մեդիան իրազեկման միջոցով ոչ միայն տեղեկություն է փոխանցում, այլև կողմնորոշում է հանրությանը և խթանում մասնակցությունը, եթե իհարկե տեղեկությունը ներկայացվում է որպես զարգացման գործընթացի մաս, ոչ թե պարզապես միջոցառման գովազդ:

Կրթաճանաչողական գործառույթ

Շրջանաձև տնտեսությունն իր հետ բերում է նոր մոտեցումներ և նոր բառամթերք: Լրատվամիջոցների կարևոր խնդիրն է մասնագիտական բարդ հասկացությունները պարզ և հասկանալի լեզվով բացատրել ու ներկայացնել դրանց կիրառությունները թե՛ բիզնեսում, թե՛ հանրային կյանքում: Պետական ռազմավարություններից մինչև միջազգային հանձնառությունները հաճախ պահանջում են ոչ միայն վերարտադրում, այլև մեկնաբանություն ու վերլուծություն:

ՇՏ-ն նաև նոր գործիքներ ու մեթոդներ է ներմուծում, ինչպես նաև նոր իմաստ տալիս առօրյա սովորություններին: Այս ամենը ճանաչելու և ընկալելու կարիք ունեն ոլորտի բոլոր դերակատարները:

Միաժամանակ առանձին կրթաճանաչողական բովանդակություն անհրաժեշտ է նաև մասնագիտական համայնքի համար: Սա վերաբերում է ոչ միայն գործարարներին, որոնք պետք է վերափոխեն իրենց բիզնեսի արժեքային շղթաները, այլև հարակից մասնագիտությունների ներկայացուցիչներին, որոնց գիտելիքներն ու հմտությունները հնարավորություն են տալիս կյանքի կոչել ՇՏ սկզբունքներն ու մոտեցումները՝ վերածելով դրանք գործիքների, նյութերի և մեթոդների:

Բուն TV-ն շրջանաձև տնտեսության թեմայով մինչև տասը րոպեանոց ամփոփ դասախոսությունների շարք է մշակել: Սա մեդիայի այս գործառույթի հետաքրքիր օրինակ է, որը կարող է օգտակար լինել նաև ոլորտի մասին պարզ ու մատչելի տեղեկություն փնտրող լրագրողների համար: Հաղորդաշարի առաջին մասը կարող եք դիտել այստեղ:

Հանրայնացման և միջնորդական գործառույթ

ՇՏ համակարգի արդյունավետ ներդրման համար կենսական է տեղեկատվական բարենպաստ միջավայրի ձևավորումը: Դա նշանակում է, որ ներդրմանն ուղղված քայլերին զուգահեռ անհրաժեշտություն է առաջանում ձևավորել միջավայր, որը կխթանի հիմնական դերակատարների ներգրավվածությունն ու կապահովի նրանց ակտիվ մասնակցությունը: Միևնույն ժամանակ ՇՏ հասկացությունը սերտորեն կապված է կայուն զարգացման և կանաչ տնտեսության գաղափարների հետ, ինչը երբեմն ձևավորում է կանխակալ ընկալումներ: Այս պայմաններում մեդիան կարող է ձեռք բերել առանցքային գործառույթ՝ ապահովելով ոչ միայն տեսանելիություն, այլև վերլուծական մոտեցում: Հանրայնացումը չի սահմանափակվում գովազդային նյութերով. այն ենթադրում է կարևոր շերտերի և հանրային նշանակության բաղադրիչների բացահայտում:

ՇՏ համակարգի ձևավորման գործընթացում մեդիան գործում է որպես կապող օղակ՝ պետության, բիզնեսի, քաղաքացիական հասարակության և հանրության միջև: Սա դրսևորվում է ոչ միայն տեղեկատվության տարածմամբ, այլև գործընթացներին մասնակցության խթանմամբ: Պետական քաղաքականության արդյունավետության տեսանկյունից կարևոր է, որ մշակված փաստաթղթերը դառնան հանրային լայն քննարկման առարկա, իսկ մեդիայի ներգրավումը ապահովում է այդ գործընթացների

առավել բարձր արդյունավետություն: Բացի այդ, մեդիան հնարավորություն է տալիս անուղղակի մասնակցություն ապահովել այն խմբերի համար, որոնք տարբեր պատճառներով չեն կարողանում մասնակցել ուղիղ երկխոսության հարթակներին:

Լրագրողների դերը կարևոր է ոչ միայն ոլորտային միջոցառումները լուսաբանելու, այլև հանրայնացնելու և տարածելու այն նախաձեռնությունների մասին հայտարարությունները, որոնք պահանջում են հանրության կամ մասնագիտական խմբերի մասնակցություն: Հաճախ կրթական կամ դրամաշնորհային ծրագրերի մասին հաղորդակցությունը, այդ թվում նաև ոչ ճիշտ հաղորդակցման կամ լրագրողների հետ ոչ արդյունավետ աշխատանքի արդյունքում, մեդիայի կողմից ընկալվում է որպես գովազդային հայտարարություն: Այս պարագայում լրագրողը չի օգտագործում այն որպես տեղեկատվական առիթ՝ ոլորտի և դրա դերակատարների մասին բովանդակություն ստեղծելու համար: Մինչդեռ, եթե նման իրադարձությունները ներկայացվեն որպես ՇՏ համակարգի զարգացման ավելի լայն գործընթացի մաս, դրանք դառնում են կարևոր հանրային ուղերձներ, որոնք նպաստում են նաև թիրախային խմբերի ներգրավմանը:

Լրագրողական համայնքը կարող է նաև ձևավորել յուրահատուկ երկխոսական հարթակ գիտական և նորարարական մոտեցումներ մշակող թիմերի, բիզնեսի և պետական սեկտորի միջև: Հայաստանում դեռևս ձևավորված չեն գիտական համայնքի և բիզնեսի համագործակցության ավանդական խողովակները: Այս պայմաններում գիտական ծրագրերի մասին պատրաստված լրագրողական նյութերը, եթե ներկայացվում են ՇՏ օգտակարության և կիրառական նշանակության տեսանկյունից, կարող են բացել նոր համագործակցության հնարավորություններ ու խթանել գիտական և գործնականի փոխկապակցումը:

Ի վերջո, մեդիան հանդես է գալիս որպես յուրօրինակ ֆիլտր և ինդիկատոր. լրագրողը նախ ինքը պետք է անցնի թեմայի ընկալման փուլով, զրուցի տարբեր դերակատարների հետ, դիտարկի հարցի բազմակողմանիությունը: Շատ հաճախ հենց լրագրողներն են առաջին թիրախային լսարանը, որը ցույց է տալիս՝ արդյոք ընտրված լեզուն, ոճը և բովանդակությունը բավական գրավիչ են լայն հանրության համար:

Քննադատական և հանրային վերահսկողության գործառույթ

ՇՏ համակարգի կայացման համար անհրաժեշտ է, որ պետական քաղաքականությունները և բիզնես նախաձեռնությունները լինեն թափանցիկ ու գնահատելի: Մեդիայի կարևոր գործառույթներից է քննադատորեն վերլուծել ինչպես պետական քայլերը, այնպես էլ մասնավոր սեկտորի նախաձեռնությունները՝ ցույց տալով դրանց ուժեղ և թույլ կողմերը: Սա հնարավորություն է տալիս հանրությանը տարբերակել խոստումները իրական արդյունքներից:

Միևնույն ժամանակ մեդիան իրականացնում է հանրային վերահսկողություն՝ ապահովելով, որ պետական մարմինների և ընկերությունների գործողությունները լինեն տեսանելի ու հասկանալի: Մեդիան բարձրաձայնում է, թե որքանով են իրականում կատարվում ռազմավարական փաստաթղթերում նախատեսված քայլերը, արդյոք բիզնեսները կիրառում են շրջանաձևության սկզբունքներ և դրանք ներկայացնում թափանցիկ կերպով:

Այս գործառույթը կարևոր է ոչ միայն հաշվետվողականության, այլև վստահության ձևավորման տեսանկյունից: ՇՏ-ի զարգացման այս փուլում կենսական նշանակություն ունի, որ ոլորտի հիմնական դերակատարները վստահություն ունենան էկոհամակարգի և շրջանաձև տնտեսության արժեքների նկատմամբ: Այդ վստահությունը պետք է ձևավորվի բոլոր մակարդակներում՝ թե քաղաքական որոշում կայացնողների, թե բիզնես համայնքի, թե ՔՀԿ-ների, և թե հանրության՝ որպես սպառողի շրջանում:

Հանրային վերահսկողության գործառույթի շրջանակում ենթադրվում է նաև թեման դիտարկել ոլորտային ՔՀԿ-երի կողմից առանձնացված խնդիրների դիտակետից: Սա չի ենթադրում պարզապես վերարտադրել ոլորտի վերաբերյալ բողոքները, այլ դրսևորել ավելի հոգատար վերաբերմունք ներկայացված փաստերին և հիմնավորումներին՝ այդպիսով ապահովելով հավաստիություն և ձևավորելով վստահություն ոչ միայն ոլորտի կառավարման գործընթացների, այլև հենց մեդիա համայնքի նկատմամբ:

Լրագրողների այս դերակատարությունը կարևոր է պետական քաղաքականության բոլոր փուլերում.

- **մշակման փուլում՝** գնահատելու համար գործընթացի մասնակցայնությունը և ծրագրերի իրատեսականությունը,
- **իրականացման փուլում՝** հետևելու ընթացքին, դիտարկելու գործողությունների համապատասխանությունը հաստատված պլանին,
- **գնահատման փուլում՝** վերլուծելու քաղաքականության արդյունավետությունը, ապահովելու դրա արդյունքների պատշաճ հանրայնացում և մասնակցային գնահատում:

Քննադատական գործառույթը շրջանաձև տնտեսության դեպքում լրացուցիչ կարևորություն է ստանում նաև արհեստական էկոնախաձեռնությունների կանխարգելման համատեքստում. մեդիան պետք է կարողանա բացահայտել նաև այն գործընթացները, որոնք միայն շահագործում են ՇՏ-ի տարածված ու «թրենդային» լինելը: Մեդիան կարող է օգնել հանրությանը տարբերակել իրական գործընթացները մակերեսային կանաչ լվացման (greenwashing) մոլորեցնող օրինակներից: ՇՏ թեմայի համատեքստում այս խնդրի լուսաբանման համար օգտակար կարող է լինել Եվրոպական խորհրդարանի կողմից ընդունված Կանաչ անցման համար սպառողների հզորացման հրահանգը (EmpCo հրահանգ), որով ավելի խիստ պահանջներ են սահմանում շրջակա միջավայրին և կայունությանն վերաբերող գովազդի և մարքեթինգի համար՝ խթանելով թափանցիկությունը և հաշվետվողականությունը մշակույթը և նպաստելով կանաչ անցման և շրջանաձև տնտեսության զարգացմանը:

Հանրային վարքագծի և մշակույթի փոփոխության խթանում

ՇՏ հայեցակարգը հանրության համար դեռևս նոր մոտեցում է, սակայն դրա ընկալումը բախվում է նախկին փորձից և ավանդույթներից բխող կարծրացած պատկերացումներին: «Կանաչ» և «կայուն» նախաձեռնությունների նախորդ փորձերը ձևավորել են որոշակի նախատրամադրվածություն, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր դերակատարի վերաբերմունքը պայմանավորվում է ոչ միայն նոր ստացված տեղեկությամբ, այլև արդեն գոյություն ունեցող մշակութային և սոցիալական գործոններով: Սրան ավելանում է այն հանգամանքը, որ այս հայեցակարգն ի վերջո ուղղակիորեն առնչվում է մեր ամենօրյա սպառողական վարքագծին, և հենց այդ պատճառով ազդում է ինչպես ամբողջ համակարգի, այնպես էլ դրա առանձին բաղադրիչների ու ներդրման գործընթացների նկատմամբ հանրության վերաբերմունքի և դիրքորոշման վրա:

Հայաստանում հաճախ շրջանաձևության սկզբունքները կիրառվում են բիզնեսում առանց այդպես էլ այդ անունը կրելու. օրինակ՝ ռեսուրսների խնայողության կամ վերամշակման մեթոդները երբեմն ընկալվում են ոչ թե որպես ժամանակակից և արդյունավետ լուծումներ, այլ որպես ռեսուրսների սղության դրսևորում: Այսպիսի ընկալումները կարող են նվազեցնել բիզնեսների պատրաստակամությունը հրապարակայնացնելու իրենց մոտեցումները, քանի որ այն, ինչ ՇՏ ավելի զարգացած միջավայրերում՝ օրինակ որոշ եվրոպական երկրներում, դիտվում է որպես առավելություն, տեղական շուկայի որոշ հատվածների համար շարունակում է բիզնեսին դարձնել խոցելի սպառողների աչքերում:

Այս ամենը ցույց է տալիս, որ ՇՏ համակարգի ներդրումը սերտորեն կապված է սպառողական վարքագծի և մշակույթի փոփոխության հետ: Հենց այդ պատճառով մեդիայի դերը վճռորոշ է. լրագրողները պետք է կարողանան բացատրել ՇՏ-ի ազդեցությունը անհատի առօրյայի և ազգային տնտեսության վրա՝ փոխելով հանրային ընկալումները և ցույց տալով դրանց իրական արժեքը: Այս գործընթացում մեդիան դառնում է ոչ միայն տեղեկություն փոխանցող, այլև մշակութային նոր մոտեցումներ ձևավորող և բնության տեսանկյունից առավել առողջ սպառման վարքագիծ խթանող:



ՇՐՋԱՆԱՁԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ. ՈՉ ՄԻԱՅՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Շրջանաձև տնտեսությունը առաջին հայացքից ընկալվում է բացառապես տնտեսական համակարգի մեջ. թվում է, թե խոսքը վերաբերում է միայն արտադրության, սպառման և բիզնես մոդելների վերափոխմանը: Սակայն իրականում ՇՏ-ն շատ ավելի լայն երևույթ է. այն միաժամանակ հասարակական, մշակութային և բնապահպանական գործընթաց է, որն ուղղված է մեր ապրելու և ռեսուրսները օգտագործելու ձևերի փոփոխությանը: Այս պատճառով էլ ՇՏ-ն չի կարելի դիտարկել միայն որպես տնտեսության ոլորտի խնդիր: Այն վերաբերում է մեր առօրյա սովորություններին, սպառողական վարքագծին, կրթական և մշակութային համակարգերին, ինչպես նաև հանրային քաղաքականությանը: Սա մի կողմից ստեղծում է անհրաժեշտ նախադրյալներ, որ ՇՏ թեման հայտնվի ամետարբեր ոլորտներ լուսաբանող լրագրողների օրակարգում:

Այնուամենայնիվ ակնհայտ է, որ տնտեսության և բիզնեսի ոլորտն ՇՏ -ի համար առաջնային են:

Շրջանաձև տնտեսությունը տնտեսության ոլորտում առաջին հերթին դիտարկվում է որպես ռեսուրսների օգտագործման և արտադրության նոր մոդել: Այն ենթադրում է ոչ թե ռեսուրսների գծային շրջանառություն՝ «վերցնել–օգտագործել–գցել», այլ հնարավորինս երկար ժամանակ նյութերի և ապրանքների շրջանառության մեջ պահում: Սակայն նույնիսկ տնտեսության համատեքստում ՇՏ-ն միայն արտադրության ու սպառման մասին չէ. այն վերափոխում է ողջ բիզնես միջավայրը, մրցակցային դաշտը և նոր արժեքային շղթաները:

Այս հայեցակարգը տնտեսության մեջ անդրադառնում է թե՛ խոշոր արդյունաբերության, թե՛ ՓՄՁ-ների գործունեությանը: Այն առնչվում է ինչպես արտադրական արդյունավետության բարձրացմանը, այնպես էլ շուկաների զարգացմանը: Հատկապես փոքր տնտեսությունների դեպքում, ինչպիսին Հայաստանն է, ՇՏ-ն կարող է դառնալ տնտեսական կայունության և աճի կարևոր գործիք՝ ստեղծելով ոչ միայն նոր եկամտային հոսքեր, այլև խթանելով արտահանման հնարավորությունները:

Տնտեսության ոլորտում ՇՏ-ի մասին խոսելիս կարելի է առանձնացնել մի քանի առանցքային ուղղություններ, որոնցից յուրաքանչյուրը ցույց է տալիս, որ այս հայեցակարգը շատ ավելի լայն ազդեցություն ունի, քան պարզապես «թափոնների նվազեցում»:

ՇՐՋԱՆԱՁԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Տնտեսական քաղաքականություն: Շրջանաձև տնտեսությունը և դրան նպաստող գործընթացները Հայաստանի միջազգային պարտավորությունների մաս են և արտացոլված են տարբեր ռազմավարական փաստաթղթերում: ՇՏ-ի ներդրման, դրա հնարավոր պոտենցիալի և զարգացման շուրջ պետության տեսլականը կարող է հետաքրքիր քննարկման թեմա դառնալ: Մասնագիտական դաշտում արդեն նկատվում են տարբեր դիտարկումներ, որոնք ցույց են տալիս, որ կայացվող տնտեսական որոշումները անմիջականորեն ազդեցություն ունեն նաև սոցիալական, տարածքային զարգացման և բնապահպանական ոլորտների վրա:

Միջազգային համատեքստ: ՇՏ-ն համաշխարհային գործընթաց է. ԵՄ տարածքում այն արդեն ոչ միայն խրախուսվող մոտեցում է, այլև բիզնեսների համար պարտադիր պահանջ՝ կոնկրետ ցուցանիշներով և չափելի նպատակներով: ՇՏ օրենսդրական փաթեթների, քաղաքական և գործնական գործիքակազմի իրականացումը և այդ ցուցանիշներին հասնելու փորձը տարբեր երկրներում տարբեր է, ինչը արժեքավոր համեմատական նյութ կարող է դառնալ Հայաստանի համար: Միջազգային թեմատիկ զեկույցները և կոնկրետ ոլորտների ուսումնասիրությունները ոչ միայն հաջողության պատմությունների հարուստ փաթեթ են, որոնք կարող են մոտիվացնել և տեսանելի դարձնել դրական ազդեցությունը, այլ ձախողումների քարտեզ, որը հնարավորություն է տալիս բացահայտել թաքնված խնդիրները և բարձրաձայնել ռիսկերը:

Այս համատեքստում հատկապես կարևոր են համեմատելի երկրների հետ իրականացված վերլուծությունները: Դրա համար արդեն առկա են բավարար տվյալներ և նյութեր, քանի որ Հայաստանում իրականացվող ՇՏ-ին առնչվող մի շարք խոշոր միջազգային ծրագրեր միաժամանակ գործում են նաև տարածաշրջանի այլ երկրներում: Սա լրացուցիչ հնարավորություն է մեդիայի համար՝ կատարելու համեմատական դիտարկումներ, ներկայացնելու տարբեր երկրների իրավիճակները, կիրառվող գործիքների ազդեցությունն ու գնահատելու դրանց արդյունավետությունը: Նման մոտեցումը թույլ է տալիս տեղական փորձը դիտարկել ավելի լայն համատեքստում՝ ընդգծելով ընդհանուր միտումները և առանձնահատուկ մարտահրավերները: Միջազգային ծրագրերի օրինակներ հնարավոր է գտնել ուղեցույցի «ռեսուրսներ» բաժնում:

Արտադրողականության բարձրացում և նոր արժեքային շղթաներ: Սա բովանդակային կարևոր թեմա է հատկապես բիզնես համայնքի համար: Որակյալ ու վստահելի բովանդակություն ստեղծելու համար անհրաժեշտ է միավորել տարբեր աղբյուրներ՝ բիզնես խորհրդատվության ոլորտում գործող հեղինակավոր փորձագետներ, իրական հայկական ՇՏ բիզնեսների օրինակներ, գիտական համայնքի և ոլորտը համակարգող պետական մարմինների ներկայացուցիչներ:

Հայաստանում դեռևս քիչ են ՇՏ խորհրդատվությամբ զբաղվող մասնագետները, բայց կան գործնական փորձ ունեցող բիզնես խորհրդատուներ, որոնք պարզ ու հասկանալի լեզվով կարող են բացատրել՝ ինչպես կարող է արժեքային շղթայի փոփոխությունը ոչ միայն նվազեցնել բնապահպանական վնասը, այլև բերել եկամուտ: Թեման աստիճանաբար հետաքրքրություն է վայելում նաև տնտեսագետների, կայուն զարգացման և բնական ռեսուրսների կառավարման մասնագետների շրջանում և բացի այդ, արդեն իսկ կան այս ոլորտում գիտական բովանդակություն ստեղծած մասնագետներ: Միաժամանակ օրեցօր աճում է նաև իրական բիզնես օրինակների քանակն ու փորձառությունը:

Միայն CirculUP! ծրագրի շրջանակում շուրջ երկու տասնյակ ստարտափներ և ՓՄՁ-ներ արդեն իսկ սկսել են իրականացնել արժեքային շղթայի փոփոխություն, և արդեն բավարար ինֆորմացիոն պաշար են կուտակել, ինչը լրագրողներին հնարավորություն է տալիս ոչ միայն առանձին բիզնես և մարդկային պատմություններ պատմելու, այլև քննարկելու ոլորտի արդյունավետությունն ու խնդիրները: Ավելին՝ նրանցից շատերի բիզնես պրոցեսները կարող են դիտարժան լինել՝ ապահովելու լրագողական վիզուալ բաղադրիչները:

Կանա՞չ, թե՞ շրջանաձև: Հանրության զգալի մասը և անգամ շատ բիզնեսներ ՇՏ-ն նույնացնում են բացառապես բնապահպանական պարտավորությունների հետ: Իրականում, թեև ՇՏ-ն իր բնույթով բերում է դրական բնապահպանական արդյունքներ, դրա հիմնական նպատակը արտադրական գործընթացների արդյունավետ կազմակերպումն է՝ նվազագույն թափոններով և առավելագույն արդյունքով: Սա նշանակում է, որ ճիշտ ռազմավարություն մշակելու դեպքում հնարավոր է միաժամանակ բարձրացնել ռեսուրսների արդյունավետությունն ու բիզնեսի շահութաբերությունը: Հենց այս տեսանկյունից ՇՏ-ն կիրառելի է նույնիսկ այն ընկերությունների համար, որոնք չունեն բնապահպանական ընդգծված օրակարգ, ինչը թեմայի լուսաբանումը բնապահպանական թեմատիկ շրջանակից հնարավոր է դարձնում տեղափոխել նաև ռեսուրսների արդյունավետ կառավարման, նոր հնավորությունների և նոր բիզնես լուծումների քննարկման հարթություն:

Լրագրողների համար մեդիաբովանդակության մեծ աղբյոր կարող է լինել գուղատնտեսությունը: Այս ոլորտը խիստ զգայուն է կլիմայի փոփոխության, բնապահպանական խնդիրների նկատմամբ, և այս ոլորտում փոփոխությունների անհրաժեշտությունը առավել սուր է զգացվում: Թեման լրագրողների համար կարևոր է, քանի որ այն ուղղակիորեն առնչվում է պարենային անվտանգությանը, մարդկանց առողջությանը և կենսապահովման հիմնարար իրավունքներին:

Միևնույն ժամանակ շրջանաձև տնտեսության գործիքները գյուղատնտեսության մեջ բացում են ոչ միայն «կանաչ» արտադրության, այլև շահութաբեր նոր մոդելների հնարավորություններ: Սա լրագրողներին հնարավորություն է տալիս ներկայացնելու ոչ միայն բարձր նպատակները, այլև տնտեսական օգուտները՝ ցույց տալով, թե ինչպես է ոլորտը դառնում սոցիալական ինտեգրման, համայնքային զարգացման և տեղական տնտեսության ամրապնդման կարևոր բաղադրիչ:

Նոր շուկաներ, ֆինանսական հնարավորություններ և ներդրումային գրավչություն

ՇՏ-ի զարգացումը բերեց միջազգային ստանդարտների նոր պահանջների: Որոշ երկրներում այլևս հնարավոր չէ հին մեխանիզմներով մատակարարել արտադրանք կամ ծառայություն: Միևնույն ժամանակ ՇՏ ապրանքներն ու ծառայությունները միջազգային շուկաներում ունեն աճող պահանջարկ: Օրինակ՝ եվրոպացի սպառողները պատրաստ են ավելի բարձր գին վճարել, եթե վստահ են, որ տվյալ բիզնեսը առաջնորդվում է ՇՏ մոտեցումներով: Սա հայկական ընկերություններին հնարավորություն է տալիս իրենց տրանսֆորմացիան դիտարկել որպես մրցակցային առավելություն: Նման մոտեցում որդեգրած մի շարք տեղական ընկերություններ արդեն ընդլայնել են միջազգային գործընկերների շրջանակը: Առանաձնակի հետաքրքիր կարող է լինել այն հարցի դիտարկումը, թե ով և ինչպես է Հայաստանում չափում բիզնեսների «կանաչ» և «շրջանաձև» լինելը, ինչ սերտիֆիկացման մեխանիզմներ են կիրառվում և այլն:

Մյուս կողմից սա նաև ֆինանսներ և ներդրումներ ներգրավելու միջոց է. միջազգային ֆինանասկան շատ կորպորացիաներ կանաչ և շրջանաձև բիզնեսների համար տրամադրում են արտոնյալ պայմաններ, իսկ միջազգային ներդրողները այսօր էլ ավելի մեծ ուշադրություն են դարձնում այն ընկերություններին, որոնք գործում են շրջանաձև սկզբունքներով՝ հաշվի առնելով ինչպես քաղաքականության միտումները, այնպես էլ կայունությունը: Այս հարցը կարելի է դիտարկել ինչպես առանձին բիզնեսների, այնպես էլ ընդհանուր երկրի ներդրումներ ներգրավելու պոտենցիալի համատեքստում:

Տնտեսական կայունություն և ռիսկերի նվազեցում. ՇՏ-ն նվազեցնում է կախվածությունը ներմուծվող հումքից և նվազեցնում ճգնաժամերի ազդեցությունը առանձին բիզնեսների և ընդհանուր տնտեսության վրա: Հատկապես հայաստանյան բիզնես համայնքի դեպքում այս հարցի հանրային քննարկումը կարևոր է ոչ միայն առանձին բիզնեսների կենսունակության, այլև ազգային անվտանգության համատեքստում:

Այս պահին Հայաստանի կառավարության հետ համագործակցությամբ իրականացվում են մի շարք երկարաժամկետ միջազգային ծրագրեր, որոնք ներառում են ինչպես քաղաքականության մշակման, այնպես էլ գործնական մեխանիզմների ձևավորման գործընթացներ: Այս ծրագրերի յուրաքանչյուր փուլ կարող է ծառայել որպես անսպառ նյութ լրագրողների համար՝ թե՛ պետական քաղաքականության լուսաբանման, թե՛ կոնկրետ մարդկային պատմությունների ներկայացման տեսանկյունից:

«Կայուն» և «կանաչ» պիտակ կրող բոլոր նախաձեռնությունները՝ քաղաքային փաստաթղթերից մինչև միջազգային ծրագրեր, եթե ոչ ուղիղ, ապա անուղղակիորեն առնչվում են շրջանաձև տնտեսությանը և դրա գործընթացներին: Նույն նախաձեռնություններին «շրջանաձև տնտեսության» դիտանկյունից նայելը լրագրողներին հնարավորություն է տալիս ընդլայնել թեմատիկ շրջանակը և լսարանը՝ ավանդական դարձած թեմաներին հաղորդելով նոր շեշտադրումներ և մեկնաբանության հնարավորություններ:

ՇՐՋԱՆԱՁԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԹԵՄԱՆ ՈՉ ՏՆԵՍԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Շրջանաձև տնտեսությունը ուղղակիորեն փոխկապակցված է նաև մյուս ոլորտների հետ և կարող է մեդիաբովանդակության լավ թեմա կամ ինֆորմացիոն առիթ լինել ամենատարբեր ոլորտներ լուսաբանող լրագրողների համար: Այն իր ազդեցությունն է ունենում ոչ միայն տնտեսության, այլև հանրային քաղաքականությունների և հանրային կյանքի մի շարք այլ ոլորտների վրա: Հետևաբար թեման կարող է հետաքրքիր ու կիրառելի լինել ինչպես ոլորտային մասնագիտացում ունեցող լրագրողների, այնպես էլ լայն սպեկտոր լուսաբանող խմբագրությունների համար:

Ստորև ներկայացված են հիմնական մի քանի ոլորտներ, որոնց հետ ՇՏ-ն ունի բովանդակային և գործնական փոխկապակցվածություն.

Բնապահպանություն

Շրջանաձև տնտեսությունը սերտորեն կապված է բնապահպանական օրակարգի հետ: Թեպետ այն հաճախ առաջին հերթին նույնացվում է թափոնների կառավարման հետ, իրականում ընդգրկում է բոլոր հիմնական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը: Հայաստանում այս ոլորտում արդեն քայլեր են արվում՝ քննարկվում են պետական ռազմավարություններ, ներդրվում են փորձնական ծրագրեր աղբի տեսակավորման, վերամշակման և արտադրական թափոնների երկրորդային օգտագործման համար: Սա լրագրողների համար հետաքրքիր թեմա է ոչ միայն որպես «աղբի» հարց, այլ նաև որպես տնտեսական ու սոցիալական արժեք ստեղծող գործընթաց, քանի որ այն կարող է ձևավորել նոր շուկաներ և խթանել նորարար լուծումներ:

Ամեն դեպքում թափոնների կառավարումն այն հիմնական թեմաներից է, որ թե՛ ուղղակի, և թե՛ միջորդավորված ձևով կապվում է շրջանաձև տնտեսության հետ, հատկապես հիմա, երբ Արտադրողի ընդլայնված պատասխանատվության ինստիտուտի ներդրման գործնթացը ակտիվ փուլում է: Հենց այս իստիտուտի թափոնների կառավարման միջոցով գործում է որպես տնտեսական խթանների ձևավորման մեխանիզմ, որի նպատակն է փոխել արտադրողների վարքագիծը, խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը՝ դառնալով գծային տնտեսությունից շրջանաձև տնտեսություն անցման առանցքային խթան: ՀՀ Կառավարությունը արդեն հավանություն է տվել «Արտադրողի ընդլայնված պատասխանատվության մասին» օրենքի նախագծին և առաջիկայում այս օրենքի քննարկման գործընթացը կտեղափոխվի ԱԺ: Այս փուլում լրագրողների ակտիվ և բովանդակային լուսաբանումը կօգնի ոչ միայն հիմնական դերակատարներին լինել ավելի իրազեկ և պատրաստված

սպասվող փոփոխություններին, այլև խթանել նրանց մասնակցությունը օրենքի կիրարկմանն ուղղված գործընթացներին:

«ԱԸՊ Կողմնացույց. արտադրողի ընդլայնված պատասխանատվությունը (ԱԸՊ)՝ որպես կայուն և շրջանաձև տնտեսության քաղաքական գործիք» գիտական աշխատությունը կարող է օգնել հստակ պատկերացում կազմելու ԱԸՊ իստիտուտի և շրջանաձև տնտեսության փոխազդեցության մասին: Նարեկ Օհանյանի մշակած ձեռնարկը հնարավոր է գտնել այստեղ:

ԱԸՊ վերաբերյալ ամփոփաթերթը՝ այստեղ:

Բնապահպանական խնդիրների շարքում կարելի է դիտարկել նաև ջրի կառավարումը: Լրագրողները հաճախ են անդրադառնում այս խնդրին, սակայն հազվադեպ է հարցը դիտարկվում շրջանաձև տնտեսության համատեքստում: Խմելու և ոռոգման համակարգերի արդյունավետությունը, արդյունաբերական ջրի կրկնակի օգտագործումը և ջրախնայող տեխնոլոգիաները դառնում են ՇՏ գործիքակազմի կարևոր բաղադրիչ: Այս թեման կարելի է լուսաբանել թե՛ համայնքային, թե՛ արտադրական մակարդակներում՝ ցույց տալով ինչպես են ջրային ռեսուրսների խնայողությունը և վերահսկումը դառնում ոչ միայն բնապահպանական, այլև տնտեսական արդյունավետության հարց: Նույն տրամաբանությամբ էներգիայի խնայողությունն ու վերականգնվող աղբյուրների օգտագործումը նույնպես կարող են դիտարկվել ՇՏ մոտեցումների շրջանակում՝ ցույց տալով, թե ինչպես կարելի է նվազեցնել ծախսերը և նվազագույնի հասցնել բնության վրա թողած բացասական ազդեցությունը:

Այս ամենը հանգեցնում է նաև բիզնեսների բնապահպանական ազդեցության խնդրին. արդյոք ընկերությունները հաշվարկում են իրենց ածխածնային հետքը, ի՞նչ քայլեր են ձեռնարկում ջրի, էներգիայի կամ հումքի օգտագործումը կրճատելու համար: Սա լրագրողների համար կարող է լինել ոչ միայն տնտեսական հաշվարկի, այլ նաև հանրային վստահության թեմա: Մյուս կողմից՝ սպառողների վերաբերմունքն այս հարցում վճռորոշ է. հաճախ հենց նրանք են որոշում արդյոք պետք է աջակցել այն ապրանքին ու ծառայությանը, որն ունի բնության վրա նվազագույն բացասական ազդեցություն:



ՀՀ-ում այս խնդիրները, սակայն, հաճախ բևեռացված են ներկայացվում. բնապահպանները շեշտը դնում են հիմնականում բնության վրա թողած ազդեցության վրա, իսկ բիզնես համայնքի ներկայացուցիչները՝ տնտեսական աճի և

զարգացման: Այնինչ միայն համադրված ու զուգահեռ քննարկումն է, որ հնարավորություն է տալիս հանրությանը հասկանալու այս հարցերի բալանսավորման անհրաժեշտությունը և ամբողջական պատկերը: Այս մոտեցումը լրագրողների համար դառնում է հզոր գործիք՝ ցույց տալու, որ ՇՏ-ը ոչ թե հակադրություն է բնապահպանության և տնտեսության միջև, այլ դրանց հավասարակշռման մոդել:

Այս համատեքստում կարևոր է ոչ միայն ներկայացնել միջազգային հաջողված փորձերը, այլև ընդգծել տեղական բիզնես մոդելները: Հայաստանում արդեն կան ընկերություններ և ստարտափներ, որոնք շրջանաձև լուծումների միջոցով ոչ միայն նվազեցնում են բնապահպանական բացասական ազդեցությունը, այլև մշակում են գործիքներ և մեթոդներ, որոնք ուղղակիորեն նպաստում են բնության պահպանմանը և նույնիսկ վերականգնմանը: Նման օրինակները լրագրողների համար հատկապես արժեքավոր են, քանի որ դրանք ցույց են տալիս, որ ՇՏ-ը կարող է լինել ոչ միայն վնասի նվազեցման միջոց, այլ նաև ակտիվ ներդրում էկոհամակարգերի վերականգնման և երկարաժամկետ կայունության ապահովման գործում:

Կրթություն

ՇՏ վերաբերյալ կրթական գործիքները հանրակրթական դպրոցներում հիմնականում հայտնվում են արտադասարանական նախաձեռնությունների և էկո կամ կանաչ ակումբների գործունեության շրջանակում: Սովորաբար այս թեման ներկայացվում է որպես թափոնների կառավարման ածանցյալ մեխանիզմ և պատասխանատու բիզնես մոտեցում: Որոշ միջազգային ծրագրերի շրջանակում իրականացվում են նաև երիտասարդների կամ թիրախային կոնկրետ խմբի շրջանաձև գաղափարների գեներացմանն ու իրականազմանն ուղղված բաղադրիչներ, որոնք հիմնականում

համայնքակենտրոն են և ուղղված են կոնկրետ թիրախային խմբի կամ աշխարհագրական համայնքի խնդիրների լուծմանը և ազդեցությունը ևս թիրախային է։

Շրջանաձև տնտեսության համակարգի ներդրման տեսանկյունից կարևոր է այս կրթական նախաձեռնությունները դիտարկել տնտեսության, համայնքի զարգացման և պառողական նոր մշակույթի տարածման համատեքստում, քանի որ դրանք ստեղծում են նաև տեղեկատվական բարենպաստ միջավայր ՇՏ արժեքների ընկալման համար։

Բարձրագույն ֆորմալ կրթության ոլորտում վերջին տարիներին նույնպես զգալի ակտիվություն է նկատվում։ Ու թեպետ ոչ բոլոր բուհերն են ՇՏ թեման անվանական ինտեգրել կրթական ծրագրերում, սակայն կայուն զարգացման և կանաչ մոտեցումների շրջանակում տարբեր դասընթացներում և կրթական ծրագրերում արդեն իսկ ինտեգրված են ՇՏ-ին առնչվող թեմաներ։ Իհարկե թեմայով գիտական աշխատություններ և ատենախոսությունների ցանկը մեծ չէ, սակայն զարգացման միտումներն ակնհայտ են։

«Հետբակալավրի կրթության փոխակերպումը հանուն կանաչ և կայուն ապագայի» T-Green նախագծի շրջանակում իրականացված աշխատանքների արդյունքում ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մագիստրոսի մասնագիտությունների կրթական ծրագրերի ցանկը լրացվել է «Շրջանաձև տնտեսություն և կառավարում» մագիստրոսական կրթական ծրագրով։ Ըստ էության սա մեր Հանրապետությունում առնվազն կրթության ոլորտում առաջին իրավական ակտն է, որտեղ օգտագործվում է «շրջանաձև տնտեսություն» եզրույթը։ Այս հանգամանքը խոսում է այն մասին, որ ոլորտի համար մասնագետների պատրաստումը մտնում է նոր փուլ։ Սա ինքնին հետաքրքիր թեմա է լրագրողների համար՝ լուսաբանելու, թե ինչպես է համալսարանական համակարգը արձագանքում ժամանակակից պահանջներին և ինչ նոր մասնագիտություններ են ձևավորվում։

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը մշակել է ամփոփ զեկույց, որը ներկայացնում է շրջանաձև տնտեսության թեմայով ակադեմիական կրթական նախաձեռնությունների ընդհանուր պատկերն ու զարգացման միտումները։ Զեկույցը կարող է օգտակար լինել ՇՏ-ի ակադեմիական համայնքում ՇՏ ինտեգրման հարցերը դիտարկելիս։

Զեկույցն ամբողջությամբ՝ այստեղ։

Զուգահեռաբար շարունակվում են ոչ ֆորմալ կրթական նախաձեռնությունները: Դրանք հիմնականում իրականացվում են ՀԿ-ների կողմից, որոնք աշխատում են բիզնեսների, բնապահպանության կամ ռեսուրսների կառավարման ոլորտում: Կան նաև բիզնեսներին ուղղված հատուկ ծրագրեր, որոնք օգնում են նորաստեղծ ընկերություններին սկզբից մշակել շրջանաձև բիզնես ռազմավարություն կամ վերափոխել իրենց գործող մոդելները: Այս նախաձեռնությունների զգալի մասը ստեղծում է բաց և հասանելի կրթական նյութեր, որոնք կարող են օգտակար լինել նաև լրագրողների համար՝ թեմայի մասին անհրաժեշտ նախնական գիտելիք ստանալու և նյութերի համար արժանահավատ աղբյուր գտնելու նպատակով:

CirculUP! Ծրագրի շրջանակում մշակվել և իրականացվել են ՇՏ թեմայով կրթական ծրագրեր տարբեր տարիքային խմբերի համար: Լրագրողների համար կարող է հետաքրքիր լինել ոչ միայն ծրագրերի ընթացքը, այլև կրթական նյութերը, որոնք կարող են օգնել ոլորտի մասին ավելի լավ պատկերացում կազմել: Առանձին կրթական ծրագիր է մշակվել հենց բիզնես ընկերություններ համար: CIRCO վերապատրաստումները հնարավորություն են տալիս բինզեսին վերլուծել իրենց բիզնես արժեշղթան, քարտեզագրել բացերն ու մշակել շրջանաձև մոդելների ներդման գործողությունների ծրագիր: Սակայն պետք է հաշվի առնել, որ նման դասընթացները բարարում են շրջանաձևության անցման առաջին փուլը միայն: Դրանք հիմնականում իրականացվում են ոչ թե գիտնականների, այլ հավաստագիր ունեցող բիզնեսի ոլորտում աշխատող ուսուցանողների կողմից: Սա ենթադրում է, որ կախված ոլորտից շրջանաձև մոդելների հստակ հաշվարկների և գործիքների համար բիզնեսը լրացուցիչ մասնագիտական խորհրդատվության կարիք կունենա:

Գիտություն և նորարարություն

ՇՏ մոտեցումները հաճախ ենթադրում են ոչ ավանդական և նորարական լուծումներ ռեսուրսների կառավարման համար. դրանք, սակայն, պարզապես ստեղծարար գաղափարներ չեն, և հատկապես իրականացման փուլ կարող են անցնել միայն գիտական հետազոտությունների, փորձարարական արդյունքների և հստակ հաշվարկների առկայության դեպքում: Չնայած հայաստանյան գիտական դաշտում ՇՏ առանձին մեծ փաթեթ դեռ չկա, հարակից բազմաթիվ հետազոտություններ իրականացվել են «կանաչ տնտեսություն» և «կայուն զարգացում» դիսկուրսի շրջանակում:

Ամենաակտիվ զարգացումները նկատվում են գյուղատնտեսության և սննդի արդյունաբերության ոլորտում, որտեղ մեծ պոտենցիալ կա թափոնների վերամշակման, երկրորդային օգտագործման և արտադրական ցիկլերի կրճատման համար: Գիտական նյութերի սղությունը պայմանավորված է նաև միջգիտակարգային համագործակցության մշակույթի դեռևս ոչ բավարար զարգացմամբ: Միևնույն ժամանակ միջազգային կրթական նախաձեռնությունների և գործընկերությունների շրջանակում տարբեր բուհերում փորձ է արվում համադրել բնագիտությունը, տնտեսագիտությունը և ինժեներական գիտությունները:

Հիմնական խնդիրն այստեղ մնում է գիտության և բիզնեսի միջև կապի թուլությունը: Սա ոչ միայն խոչընդոտում է գիտական արդյունքների գործնական կիրառումը, այլ նաև սահմանափակում է ուսումնական գործընթացում իրական հայկական բիզնես օրինակներ ներգրավելու հնարավորությունը: Լրագրողների համար սա լայն հնարավորություն է՝ բարձրաձայնելու այն խնդիրները, որոնք գիտական համայնքը արձանագրում է, սակայն ինքնուրույն լուծել չի կարողանում:

Կարևոր է նշել, որ Հայաստանը կարող է դառնալ ՇՏ նորարարական լուծումների փորձարկման և նույնիսկ արտահանման երկիր. տեղական կարգավորումների ավելի ճկուն լինելու պայմաններում որոշ գաղափարների փորձարկումն ու վավերացումը այստեղ հաճախ ավելի իրագործելի է, քան Եվրոպայում: Սա լրագրողների համար հետաքրքիր դաշտ է՝ հետևելու, թե ինչպես են գաղափարները անցնում փորձարկումից մինչև գործնական կիրառություն:

Որքան էլ օգտակար լինեն բիզնես համայնքի կարողությունների զարգացման դասընթացները, որոնք օգնում են գործարարներին անցում կատարել գծային մոդելից դեպի շրջանաձև, դրանց իրականացման համար կենսական է գիտության դերը: Գիտական ուսումնասիրություններն են ապահովում ՇՏ մոդելների մշակման, ներդրման և տարածման հիմքը: Մեդիան այստեղ կարող է լրացնել և խթանել բազմաշահառու երկխոսությունը, որը հաճախ պակասում է քաղաքականությունների մշակման և իրականացման փուլերում:

Պետք է հաշվի առնել նաև, որ դերակատարների կարողություններն ու մոտեցումները նույնպես տարբեր են. քաղաքական գործիչներն ու միջազգային ծրագրերի թիմերը սովորաբար ավելի մեծ ռեսուրսներ ու մոտիվացիա ունեն իրենց աշխատանքը ցուցադրելու համար, մինչդեռ գիտնականները խուսափում են ավելորդ տեսանելիությունից և պահանջկոտ են փաստերի ու ներկայացվող արդյունքների նկատմամբ: Սակայն հենց գիտական համայնքի ակտիվ ներգրավմամբ է հնարավոր իրականացնել համակարգային փոփոխություններ այն ոլորտներում, որոնք

պահանջում են շրջանաձև մոտեցումներ: Այս համատեքստում գիտնականները կարող են դառնալ լրագրողների առանցքային գործընկերները՝ տարբեր գործիքների վերլուծության և դրանց արդյունավետության գնահատման գործընթացում:

Համայնքային զարգացում և շրջանաձև տնտեսվարություն

Շրջանաձև տնտեսության գործիքների և մոտեցումների ներդրումը հատկապես Հայաստանի պայմաններում սերտորեն կապված է ոչ միայն բիզնեսների գործունեության, այլև համայնքների զարգացման հետ: Գյուղատնտեսական մեխանիզմների դեպքում բիզնեսները հաճախ կրկնօրինակում են միմյանց փորձը. հաջողված մոտեցումները դառնում են կիրառական մշակույթ և արդյունավետ պրակտիկա:

Որոշ կանաչ լուծումներ, որոնք բիզնեսներն են ներդրել, ժամանակի ընթացքում փոխանցվում են համայնքներին ու դառնում տեղական մակարդակի նախաձեռնություններ: Սրան զուգահեռ տարբեր ծրագրերի շրջանակում հենց համայնքը, և հատկապես համայնքապետարանը, կարող են դառնալ որոշ մեխանիզմների ներդրման առաջամարտիկ: Օրինակ՝ էներգիայի խնայողության, լուսավորության համակարգերի արդիականացման կամ ջրի արդյունավետ կառավարման ոլորտում տեղական իշխանությունները հաճախ առաջինն են փորձարկում նոր լուծումներ և դրանով օրինակ ծառայում բնակիչների ու տեղական բիզնեսների համար:

Տարբեր համայնքներում վերջին տարիների ընթացքում ռեսուրսների սղության պայմաններում և/կամ տարբեր ծրագրերի շրջանակում ստեղծվել են ՇՏ նախադրյալներ. այլընտրանքային էներգիայի աղբյուրների ստեղծում, ջրի և թափոնների կառավարման նոր մեխանիզմներ: Այս ամենի մասին հանրությունը պարբերաբար լսում է պաշտոնական լրահոսից կամ համայնքային նախաձեռնությունների մասին պատմող լրագրողական պատմությունների միջոցով, սակայն քիչ են դեպքերը, որ այս հարցերը ներկայացվեն շրջանաձև տնտեսության ներդրման համատեքստում: Այս կապի բացակությունը ակնհայտ է ինչպես պաշտոնական հաղորդագրություններում, այնպես էլ լրագրողական բովանդակության մեջ:

Հիմնական պատճառներից մեկը, թերևս ոչ բավարար իրազեկվածությունն է և ընկալումը, թե ինչպես են տարբեր նախաձեռնությունների շրջանակում մեկնարկած գործընթացները փոխկապակցված մեկը մյուսի և շրջանաձև տնտեսության հետ:

Ստացում է, որ այս փուլում բավարար է պարզապես արդեն իսկ սովորական համայնքային կանաչ պատմություններին նայել ՇՏ սկզբունքների դիտակետից և այդ նախաձեռնություններն ու հաջողության պատմությունները կարող են բոլորովին նոր բովանդակության համար անսպառ աղբյուր դառնալ:

ՇՏ մոտեցումների ներդրման այս փուլում երբեն ֆինանսական աջակցություն տրամադրող ծրագերերի շրջանակում որոշ ընկերություններ իրենց բիզնեսի արժեշղթան մշակման կամ վերաձևման փուլում օգտագործում են **ոչ միայն կանաչ և շրջանաձև**, **այլև նորարար և դիտարժաման** գործիքներ, կարողանում են իրենց գործունեությունը դարձնել գրավիչ տարածք զբոսաշրջիկների համար՝ նպաստելով նաև համայնքի զարգացմանը: Այս դեպքում բիզնեսը շրջանաձև տնտեսությանը նպաստում է ոչ միայն գործիքների կիրառության, այլև մշակույթի տարածման շնորհիվ: Նման օրինակների հանրայնացումը շահեկան է բոլոր դերակատների համար:

Սակայն լրագրողները նման հաճելի ու քաղցր ինֆորմացիոն առիթները կարող են օգտագործել նաև վերլուծելու ոչ միայն կոնկրետ բիզնես օրինակը, այլ նաև համատեքստը որտեղ գործում է բիզնեսն ու բարձրաձայնել այն խնդիրներն ու համակարգային մարտահրավերները, որոնց բախվում են նման գործարարները, դիտարկել հաջողության ոչ միայն տնտեսական, այլև համայնքային և մշակութային գործոնները և իվերջո փորձել պարզել՝ ինչպես են տեղական և պետական կառավարման ինստիտուտները օգտագործում նման բիզնես օրինակների շրջանաձևության փորձը՝ հաջողված գործիքները ադապտացնելու, տարածելու և խրախուսելու համար:

Շրջանաձև տնտեսության գործիքակազմն ու մոտեցումները լրագրողները կարող են դիտարկել ոչ միայն բիզնեսի, այլև պետական մակարդակում՝ անդրադառնալով պետության տնտեսվարությանը: Պետությունը հայտարարում է կանաչ, կայուն և շրջանաձև տնտեսության խրախուսման մասին, սակայն կարևոր հարց է՝ որքանով է պետական համակարգն ինքնին՝ որպես խոշոր ռեսուրսների կառավարող օղակ, առաջնորդվում նույն մոտեցումներով:

Ի՞նչ դեր են խաղում ՇՏ սկզբունքները պետական և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների մեջ, որքանո՞վ են նրանք արդյունավետ կառավարում իրենց տրամադրության տակ եղած ռեսուրսները: Ի վերջո, պետություն ինքնին ահռելի ռեսուրսների կառավարող կառույցներից կազմված համակարգ է, և այս համատեքստում հարցը դառնում է հանրային հետաքրքրություն ներկայացնող և հանրային վերահսկողության տեսանկյունից խիստ արժեքավոր: Կարևոր է նաև վերլուծել՝ ինչպես են ՇՏ մոտեցումները արտացոլվում պետական գնումների քաղաքականության մեջ, և ինչ գործոններ են խոչընդոտում կամ հակառակը՝ նպաստում դրանց կիրառմանը:

Միաժամանակ, եթե բիզնեսի օրինակները երբեմն կարող են ընկալվել որպես գովազդային կամ կոմերցիոն պատմություններ, ապա պետական և համայնքային ռեսուրսների կառավարման թեմաները միշտ մնում են հանրային ընդհանուր շահի դաշտում: Սա լրագրողների համար ստեղծում է հստակ հնարավորություն՝ ցույց տալու, թե ինչպես է ՇՏ-ն դառնում ոչ միայն բիզնեսների ռազմավարություն, այլ նաև համայնքային զարգացման և հանրային քաղաքականության գործիք:

Համայնքի կամ քաղաքի շրջանաձևության համատեքստում կարելի է դիտարկել Ամստերդամի օրինակը, որը քաղաքային մակարդակում ՇՏ-ի առաջամարտիկ է: Ամստերդամը 2015-ից է հայտարարել է 2050-ին լիովին շրջանաձև դառնալու նպատակի մասին: Սա պաշտոնապես ամրագրվել է Ամստերդամի շրջանաձևության ռազմավարությամբ (Amsterdam Circular Strategy): Այս օրինակը նաև համայնքային իշխանության և գիտական համայնքի համագործակցության հրաշալի օրինակ է. Ամստերդամն իր ռազմավարության հիմքում դրել է տնտեսագետ Քեյթ Ռաուորթի «Դոնաթի տնտեսագիտության» հայեցակարգը: Փաստաթղթի իրականացման փուլը ևս բազմակողմանի համագործակցության արդյունք է, որտեղ քաղաքապետարանը, փորձագիտական կենտրոններն ու տեղի համալսարանները սերտորեն փոխգործակցում են այդ տեսլականը իրականություն դարձնելու համար: Ամստերդամի շրջանաձև փորձառության մասին մանրամասներ կարելի է գտնել այստեղ:

Մարդու իրավունքներ

Շրջանաձև տնտեսության համակարգը տնտեսական և բնապահպանական ենթաշերտից բացի ունի նաև մարդու իրավունքների կարևոր բաղադրիչ: «Անձի առողջ միջավայրի իրավունք»-ը, մաքուր ջրի ու հողի հասանելիությունը, թափոններից պաշտպանված լինելը և հանրային մասնակցության իրավունքը հիմնարար ազատություններ են, որոնք անմիջականորեն առնչվում են ՇՏ քաղաքականություններին: Լրագրողների համար այստեղ առկա է մեծ դաշտ՝ ցույց տալու, որ ՇՏ սկզբունքները միաժամանակ ծառայում են նաև մարդու իրավունքների պաշտպանությանը:

Հայաստանում այս ՇՏ լուսաբանման թեման հաճախ ուշադրությունը կենտրոնացած է տնտեսական արդյունքների վրա, քիչ կարելի է հանդիպել իրավական ոլորտը լուսաբանող լրագրողների, որոնք ՇՏ ռեֆորմներին ուղղված գործընթացը կդիտարկեն որպես մարդու իրավունքների իրացման և պաշտպանության մեխանիզմ:

ՇՏ թեման կարելի է լուսաբանել նաև շրջակա միջավայրի վերաբերյալ մարդու՝ տեղեկություն ստանալու, որոշումների կայացման գործընթացում հանրության մասնակցության իրավունքի համատեքստում: Այս փուլում հանրային վերահսկողության գործիքները, տեղեկատվության մատչելիությունը և քաղաքացու մասնակցության մեխանիզմները որպես կանոն չեն դիտարկվում ՇՏ օրակարգի բաղկացուցիչ մաս: Մինչդեռ իրական փոփոխություն ապահովելու համար մարդու իրավունքների ապահովումը կարող է դառնալ համակարգային բարեփոխումների առանցք:

Այս համատեքստում մեդիան կարող է առանձնահատուկ դեր ունենալ. լուսաբանելով ոչ միայն «կանաչ» արդյունքները, այլև մարդու իրավունքների իրացման հարցերը՝ ցույց կտրվի՝ ինչպես են ՇՏ մոտեցումները կիրառվում նաև սոցիալական արդարության և հանրային շահի պաշտպանության գործիքներ:

Ազգային անվտանգություն

ՇՏ-ի ազդեցությունը առանձնակի կարևոր է դիտարկել նաև ազգային անվտանգության տեսանկյունից: Ռեսուրսների արդյունավետ կառավարումը, ներմուծումից կախվածության նվազեցումը, տեղական արտադրության զարգացումը և էներգետիկ ինքնաբավությունը այն գործոններն են, որոնք ամրապնդում են երկրի կայունությունն ու անվտանգությունը:

Հաշվի առնելով Հայաստանի աշխարհագրական դիրքով պայմանավորված արտաքին հաղորդակցման և մատակարարման ուղիների սահմանափակումները, բնական ռեսուրսների քիչ քանակությունն ու էներգետիկ կախվածությունը, ինչպես նաև շարունակվող ռազմական անկայուն վիճակը՝ շրջանաձև տնտեսության ինտեգրումը դառնում է ռազմավարական հրամայական:

ՇՏ-ն առաջարկում է այս խոցելիությունը նվազեցնելու կիրառական գործիքակազմ և հենց այս դիտանկյունից հարցի քննարկումը հնարավորություն է տալիս հանրության տարբեր խմբերի ավելի հեշտ ընկալել այն ռիսկերը և խնդիրները, որոնք բնապահպանական համատեքստում հաճախ թվում են հեռավոր և ոչ հրատապ: Իսկ երբ դրանք ներկայացվում և բացատրվում է կայունության և անվտանգության համատեքստում, թեման դառնում է մարդու հիմնական պահանջներից մեկի՝ անվտանգությանն անչվող օրակարգի մաս:

Եթե ՇՏ-ն հանրայնացվի նաև ազգային անվտանգության համատեքստում, թեման նոր մեկնաբանություն կստանա նաև բիզնես համայնքի համար: Այդ դեպքում բիզնեսը շրջանաձև մոդելների ներդրումը կդիտարկի ոչ միայն որպես սեփական կենսունակության ապահովման գործիք, այլև երկրի կայունությանը նպաստող դիրքորոշում: Սա իր հերթին կբարձրացնի բիզնեսի որոշումների կշիռը և ազդեցությունը ոլորտում:

Անվտանգության շրջանակում կարևոր նշանակություն ունեն հատկապես էներգետիկ և պարենային ինքնաբավության հարցերը. շրջանցաձև լուծումները (վերամշակում, տեղական արտադրության խթանում, ջրի և հողի կայուն օգտագործում) նվազեցնում են արտաքին կախվածությունը և բարձրացնում երկրի դիմադրողականությունը: Նույն տրամաբանությամբ ջրային ռեսուրսների և հողերի կառավարման արդյունավետ մեխանիզմները կարող են դառնալ ոչ միայն բնապահպանական կայունության, այլև աշխարհաքաղաքական կայունության գործիքներ:

Այս դիտանկյունից թեմայի հանրայնացումը կարող է ընդլայնել լսարանը՝ ներգրավելով նաև այն խմբերին, որոնք սովորաբար զուտ բնապահպանական

խնդիրներին վերաբերում են վերապահումներով, սակայն պատրաստ են քննարկել կայունության և անվտանգության մարտահրավերները:

Սպառողական մշակույթ և վարքագիծ

Շրջանաձև տնտեսությունը սոցիալական ազդեցության տեսանկյունից հետաքրքիր է նաև այն պատճառով, որ այն հաճախ վերաիմաստավորում է հասարակության մեջ արդեն գոյություն ունեցող ավանդույթներ ու մշակութային պրակտիկաներ: Հայաստանում եղել և պահպանվել են բազմաթիվ սովորություններ, որոնք իրենց բնույթով ամբողջովին համապատասխանում են ՇՏ մոտեցումներին, պարզապես չեն ներկայացվել այդ պիտակով: Օրինակ՝ ընտանիքում նորածնի օրորոցի փոխանցումը սերնդեսերունդ, որը ոչ միայն ռեսուրսի խնայողություն է, այլև ունի զգացական ու մշակութային արժեք: Նման ավանդույթները լրագրողների համար կարող են դառնալ հիանալի պատմական-մշակութային նյութեր՝ ցույց տալու, թե ինչպես է ՇՏ գաղափարախոսությունը տեղավորվում մեր առօրյայի և մշակութային հիշողության մեջ:

Մյուս կողմից կան նաև այնպիսի պրակտիկաներ, որոնք երկար ժամանակ եղել և այսօր էլ շարունակում են մնալ հասանելի առօրյա ծառայություններ: Օրինակ դերձակների և կոշկակարների մատչելի աշխատանքը, որոնք հնարավորություն էին տալիս երկարացնել հագուստի կամ կոշիկի կյանքը, վերոգրյալի դասական օրինակ է. այն գործել է դարեր շարունակ, մինչդեռ այսօր նույն մոտեցումը կարելի է դիտարկել որպես ՇՏ գործիք: Այսպիսի ծառայությունների լուսաբանումը հետաքրքիր է երկու տեսանկյունից. մի կողմից՝ պատմել արհեստավորների մասին, որոնք իրականում կիրառում են ՇՏ սկզբունքներ՝ առանց այդ անվան, մյուս կողմից՝ դիտարկել, թե ինչպես են սպառողները վերաբերվում դրանց և արդյոք ժամանակակից շուկայում այդ ծառայությունները պահպանել են իրենց արժեքը:

Այս համատեքստում մեդիան կարող է կարևոր դեր ունենալ՝ վերաիմաստավորելու ավանդական ու ժամանակակից շրջանաձև մոտեցումները: Դրանք ոչ միայն հնարավորություն են տալիս հանրությանը մոտիկից տեսնել, որ ՇՏ գաղափարները մեզ համար օտար չեն, այլև ստեղծում են տեղեկատվական միջավայր, որտեղ հին ավանդույթները և նոր մոտեցումները փոխլրացվում են:



ՕԳՏԱԿԱՐ ԱՌՑԱՆՑ ՀԱՐԹԱԿՆԵՐ

Շրջանաձև տնտեսության թեման կարող է դառնալ լուսաբանման հետաքրքիր դիտակետ ամենատարբեր ոլորտներով մասնագիտացած լրագրողների համար՝ առողջապահությունից մինչև թվային տեխնոլոգիաներ, զբաղվածության և սոցիալական խնդիրներից մինչև ազգային անվտանգություն:

Որքան ավելի բազմակողմանի դիտակետերից է քննարկվում թեման, այնքան ավելի լայն է հանրային իրազեկման և ներգրավման շրջանակը, հետևաբար նաև համակարգի ներդրման արդյունավետությունը: Միևնույն ժամանակ բազմակողմանի լուսաբանումը խթանում է ոլորտի ակտիվ դերակատարների աշխատանքի տեսանելիությունն ու հաշվետվողականությունը և ստեղծում է հանրային վերահսկողության լրացուցիչ մեխանիզմ:

Ստորև ներկայացնում ենք ոլորտին առնչվող մի քանի միջազգային հարթակ, որոնք կարող են օգտակար լինել թեմատիկ մեդիա բովանդակություն ստեղծելիս:

- **European Environment Agency (EEA)**
  Շրջակա միջավայրի եվրոպական գործակալությունը հավաքում և հրապարակում է տվյալներ շրջակա միջավայրի, ռեսուրսների կառավարման և քաղաքականությունների մասին: Լրագրողների համար կարող են օգտակար լինել պաշտոնական կայքում ներկայացված քարտեզները, վիճակագրությունը և վերլուծական զեկույցները:
  🔗 eea.europa.eu
- **European Circular Economy Stakeholder Platform (ECESP)**
  Եվրոպական միության պաշտոնական հարթակ է, որը միավորում է շահագրգիռ կողմերին, տրամադրում տեղեկատվություն օրենսդրության, քաղաքականության և ֆինանսավորման հնարավորությունների վերաբերյալ: Այն նաև հնարավորություն է տալիս լրագրողներին հետևել ԵՄ քաղաքական դիսկուրսին:
  🔗 consilium.europa.eu/circular-economy
- **UNEP – United Nations Environment Programme**
  ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիրը գլոբալ մակարդակով մշակվում է զեկույցներ, վիճակագրություն և քաղաքական փաստաթղթեր կայուն սպառման, արտադրության և շրջանաձև տնտեսության վերաբերյալ: Ծրագրի պաշտոնական կայքում հասանելի են նաև մեդիա նյութեր, գրաֆիկա և տվյալներ, որոնք կարելի է օգտագործել հոդվածներում:
  🔗 unep.org

- **UNITAR – United Nations Institute for Training and Research**
  ՄԱԿ-ի ուսումնական և գիտահետազոտական ինստիտուտը առաջարկում է առցանց դասընթացներ, կրթական գործիքներ և ուսումնական նյութեր կայուն զարգացման ու շրջանաձև տնտեսության վերաբերյալ: Լրագրողները կարող են օգտվել նաև վեբինարներից և միջազգային փորձագետների հարթակից:
  🔗 unitar.org
- **UNDP – United Nations Development Programme**
  ՄԱԿ-ի զարգացման ծրագիրն է, որը Հայաստանում և ամբողջ աշխարհում իրականացնում է ծրագրեր կայուն զարգացման նպատակների (SDGs) շրջանակում: Ծրագրի պաշտոնական կայքում կարելի է գտնել թեմատիկ զեկույցներ և վերլուծություններ, ինչպես նաև հաշվետվություններ աշխարհի 170 երկրներում իրականացված և ընթացիկ ծրագրերի վերաբերյալ:
  🔗 undp.org
- **OECD Environment Directorate**
  Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության բնապահպանական տնօրինության կայքում հրապարակվում են քաղաքական վերլուծություններ, հաշվետվություններ և հետազոտություններ ռեսուրսարդյունավետության և շրջանաձև տնտեսության վերաբերյալ:
  🔗 oecd.org/environment
- **Ellen MacArthur Foundation**
  Միացյալ Թագավորությունում հիմնված միջազգային հիմնադրամ է, որը ձևավորել է շրջանաձև տնտեսության գաղափարաբանության հիմնական հենքը: Այն տրամադրում է գործարար մոդելներ, քաղաքականության առաջարկություններ և կրթական նյութեր, որոնք լայնորեն օգտագործվում են մեդիայի և մասնագետների կողմից:
  🔗 ellenmacarthurfoundation.org
- **Circularity Gap World**
  Գլոբալ հարթակ է, որը հրապարակում է ամենամյա *Circularity Gap Report*-ը՝ տրամադրելով համաշխարհային տվյալներ շրջանաձևության մակարդակի մասին և առաջարկելով գործիքներ քաղաքականությունների ձևավորման համար:
  🔗 circularity-gap.world
- **World Economic Forum (WEF)**
  Միջազգային տնտեսական հարթակ է, որը հրապարակում է վերլուծություններ և զեկույցներ բիզնեսի ներգրավման ու նորարարական այդ թվում նաև ՇՏ մոտեցումների մասին, :
  🔗 weforum.org

- **World Bank – Circular Economy Resources**
  Համաշխարհային բանկի հարթակ է, որը ներառում է զեկույցներ, վարկային ծրագրեր և հետազոտություններ ՇՏ ներդրման վերաբերյալ հատկապես զարգացող երկրներում:
  🔗 worldbank.org/circulareconomy
- **ICLEI – Local Governments for Sustainability**
  Համաշխարհային ցանց է, որը միավորում է տեղական ինքնակառավարման մարմիններին: Այն տրամադրում է գործիքակազմ և փորձագիտական նյութեր քաղաքային մակարդակով ՇՏ նախագծերի իրականացման համար:
  🔗 iclei.org
- **GACERE – Global Alliance on Circular Economy and Resource Efficiency**
  ԵՄ, UNEP և UNIDO համատեղ նախաձեռնությունն է, որն ապահովում է միջազգային քաղաքականության համադրման և փորձի փոխանակման հարթակ ՇՏ ոլորտում:
  🔗 unep.org/gacere
- **Green European Journal**
  Վերլուծական պարբերական է, որը լուսաբանում է բնապահպանական քաղաքականության, սոցիալական արդարության և CE-ի թեմաներ: Այն տալիս է լրագրողներին փորձագիտական մեկնաբանություններ և հրապարակումներ:
  🔗 greeneuropeanjournal.eu
- **Green Initiative**
  Միջազգային հարթակ է, որը կենտրոնանում է կայունության, բնապահպանական և սոցիալական ծրագրերի վրա: Այն ներառում է նաև ՇՏ-ի հետ կապված փորձառություն և նախագծեր:
  🔗 greeninitiative.eco
- **Amsterdam Circular Economy Policy**
  Ամստերդամի քաղաքային կայքն է, որտեղ ներկայացվում է քաղաքի ՇՏ ռազմավարությունը: Այն տալիս է կոնկրետ գործնական օրինակ՝ համայնքային մակարդակով ՇՏ ներդրման մասին:
  🔗 amsterdam.nl – circular economy
- **Doughnut Economics Action Lab (DEAL):** Քեյթ Ռաուորթի կողմից ստեղծված այս լաբորատորիան տրամադրում է գործիքներ և մեթոդաբանություն՝ «Դոնաթի տնտեսագիտության» մոդելը քաղաքային և համայնքային մակարդակներում կիրառելու համար:
  🔗 doughnuteconomics.org

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հեռ.՝ +37491700974,

Էլ. հասցե՝ foi@foi.am,

www.foi.am